ՀԱՅԿԱԶ

Գեղագիտական, Գրական, Հասարակ., Քննադատ., Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

XXIX —1918 ՄԱՐՏ-ՑՈՒՆԻՍ № 3-6

Քառանուինորդ տարի

Тифлис, Редакція „ТАРАЗ"—Tiflis (Caucase), Direction „TARAZ"

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան չը տպուելիքը(եթէ թերից պահան չէ վերադարձնում

—փ—

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ առ. ժ. 11—12

ԲՐՆԳՉՈՒԹԻՒՆ և ՈՒՐԲՈՔ

—o—

Յայտարարութիւն ընդունւում է առնն յիսով. ՏԱՐԱԶ-ի յայտարարական տողը առաջին երեսը 40 կ., վերջինը՝25 կոպ. մանրատառ (պէտիտ)։ Աքսաոահմանից կրկնակի։ Ձառ անգամ կրկնուողներն առանձին համաձայնութեամբ։

ՏԱՏԱՋ-ի նորկայ №-ը 7 կ.

—:—

Խմբագրութիւնը՝ Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, № 41. բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից) առ. 10 և կէս ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։

—o—

Голов, пр. 41,

Տեղեկոն 16—90

ՍՕՈՒԴ-ԲՈՒԼԱՂ

Ռուս.-Տաճկ.-Պարսկ. Ճախկին սահմանք.

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԻՆԵՐԻՆ

Ընդ հովանեաւ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

Շարունակում է իր գոյութիւնը, շարունակելով չընտանալ ոչ պետական և ոչ մեր դաշնակից այլ պետութիւններից նպաստ։ Մայիսի վերջերին Հրատապ Սփոփանքում երեք տարուց ի վեր ապաստանհալ շատ ընտանիքներից, ժողովրդապէս հաբեր հագիւ խուճապի ենթարկած, ականջ չը դրին մեզ, պրօվակացիայի զոհ եղան, կործանեցին իրենց վերջին անտեսութիւնները և փախան դէպի Վլադիկավկազ։ Սրանց տեղը բռնեցին նոր գաղթականներ Ղարսի և այլ շրջաններից։ Անկարող ենք առայժմ ուշի մանրամասնութիւններ հաղորդել ողբերգական արդի հայ իրականութեան մասին։ Նորածինները թաթովել և խաղալ էլին սկսել, մանուկները մանում էին արդէն պատանեկական հասակը, կոյսերը պսակւում և պատկներ էին ծնում։ Ամէնքը սկսել էին աշխատել, մեծ թէ փոքր, սկսել էին իրանց ապրուստը իրանք հայթայթել և նոյնիսկ սև օրւայ համար դրամ էին ամբարում և արիւն քրտինքով վաստակած դրամները երեք ֆուրգօն վարձելով, ուշի քան հինգհազար րուբլիով, կէսը ոսով, կէսը ֆուրգոններով դնացին։ Ոչ մի կերպ չը կարողացանք յիւս կասեցնել, պրօվակացիային ենթարկած, այս թշուառներին։ Մի մասից, անփորձ Վլադիկավկազ հասնողներից, հեռագիր ունենք, միւսներից ոչ մի տեղեկութիւն։

Կ. Հայոց Բարեգործ. ընկ. Ախալցխայի ճիւղի գրադարան-ընթերցարանը. այժմս ացած տաճիկներին։

ՍՏԱՑՒԱԾ ԵՆ ՆԻՒԹԵՐ

Տիկին Թամար և ինժինէր պ. Դերենիկ Սիրակոսեան ամուսիններից հինգ պուդ ալիւր զտակաշ սեղանի, իշխանուհի Ղարվառէ Բէհրութեանից իբ մի շրջանից 50 ր., Ձեյնաբ. Տուն նյրատրք Ց. և Ա. Տէր-Դաւթեաններից 360 ր.։ Թիֆլիսի վաճառական պ. Սարգիս Սոլոմոնեան Ցարութիւնեանցի միջոցով 1200 ր. Ժողոված մի խումբ հայ (Ռազդէլեանի) մանուֆակտուրիստ վաճառականներից ճաշի ժամանակ։ Վեհամենիան փողոցի վրայ ապրող գոյուն պատանիներ օր Սիրանույշ Տաճիանցի, Հարմրարձում Տէր-Դաւթեանի և ընկ. նախաձեռնութեամբ պ. Տէր-Դաւթեանի տանը կպմած հանդիսից գոյացած ամբողջ արդիւնքը 119 ր.։

ԲԱԶՄԱՐՋԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

LXXII

Բոցավառ Ռուսիան և նրա կայծերի անդրկովկասեան բեկորները։

Ուժեղ, լայնատարած, մեծ, յաղթական Ռուսիայի յոնքը ուզղելու փոխարէն, ոչ միայն աչքն էլ հանեցին, այլև ամբողջապէս կազմալուծեցին, յօշոտեցին, պատռպատառ արին։ Այն ժամանակ Ռուսիան, որ 300 տարի շարունակ մի մանեակ միայն ունէը, այն է՝ իր մեծութեան և կենսաունակութեան չատագով իրան նուիրուած բազմացեղ, բազմալեզու իր հպատակ ազգութիւններին կուռ տալու, ռուսացնելու, պրաւօսլաւ դաւանելու, ինքը՝ զուտաբիւն Ռուսիան և պրաւօսլաւը դէն շպրտեց իր ռուսականութիւնն էլ, իր պրաւօսլաւականութիւնն էլ։ Եւ անբան անասունի, գազանի նման, սկսեց քարուքանդ անել ռազմի ճակատը և թէ նրա թիկունքը։ Յեղափոխութիւնը անբան, անգիտակից, անգրագէտ լայնատարած Ռուսիային կործանեց, ինքն էլ նրա ատերակների մէջ խռովարարելով։ Մտաւորականութիւնը, հայրենասիրութիւնը հալածեց և տպէտ ամբոխին միայն մի միտք ներշնչեց՝ ամեն ինչ պրօլետարիատին, ամեն ինչ գիւղացուն, ամեն ինչ զինուորին։ Եւ պրօլետարիատը կործանեց գործարանները, գիւղացին զաւթած հողերը թողեց անմշակ և ապրմի դադրեց լքած զինուորի հետ, երեքն էլ խօսք մէկ արած սկսեցին ալան-թալանը, սպանութիւնները, աւերումները, հրդեհները։ Սրանց դեկավար պարագլուխներն էլ միմեանց ձեռքից իշխանութիւնները զաւթելու և իրրև թէ իրենց վարդապետութիւնները իրականացնելու նպատակաւ, այդ անգրագէտ գիւղացիներին, բանւորականութեանը և դասալիք զինուորներին զինեցին միմեանց դէմ, կազմեցին հղբայրասպան բանակներ ու արտաքին թշնամու տեղ միմեանց են կառորում, միմեանց շէն ու քաղաք, աւան ու կայան հրդեհում, թշուառ իրենց ընտանիքներին էլ ժամանում սով և ամեն զրկանք։ Իսկ արտաքին թշնամին շարունակում է ներս խուժել ամեն կողմից ու պատառ-պատառ անել մեծ Ռուսիան։ Եւ մեծ Ռուսիայի բազմացեղ, բազմալեզու ժողովուրդները, ճարահատ ու ստրուկիանալու, միակ ելքը ինքնապաշտպանութեան մէջ են գտնում։

Եւ իրաքանչիւրը պաշտպանւում է, ինչպէս կարողանում է։ Ռուսաստանից բակուած Ֆինլանդեան, Ուկրայինան, Վրաստանը իրրև առանձին պետութիւններ Գերմանիայի բարեհաճութիւնն ու հովանին են ընտրել։ Եւ շատ էլ լաւ են արել։ Տարիներ առաջ, դեռ պատերազմի շրջուկ անգամ չըկար, որ մենք՝ սիլտասել ենք, թէ ապագան երեք պետութիւններին են՝ Գերմանիային, Ճապոնիային ու Ռուսաստանինը և այս երեքը դաշն կապած ամբողջ աշխարհում խաղաղութիւնը կարող էին յարատև պահելու։ Ասել էինք՝ երեքուն (միամիտ) ռուս դիպլօմատիան ժամանակին չըկարողացաւ Ճապոնիայի առաջարկը, բարեկամական դաշն կապել, հրեց իրանից և անգիտակցաբար հարկադրեց Ճապոնիային Անգլիայի հետ դաշնակցելու, իսկ Ռուսիային էլ պատերազմ յայտնելով, յաղթեց նրան ու նսեմացրուց։ Ճապոնիայից պարտւելուց յետոյ միայն Ռուսիան համամաձայնութեան դաշն կապեց Անգլիայի միջոցով Ճապոնիայի հետ, որն արդէն Անգլիայի դաշնակիցն էր։ Ուրեմն ռուս երեքուն (միամիտ) դիպլօմատիան փաստօրէն դաշնակցեց Ճապոնիային, նրանից պարտւելուց յետոյ։ Այդ Անգլիայի հզօր դիպլօմատիայի փայլուն յաղթանակներից մէկն էր։ Ապա վեհանձն, բայց մաղձ, այսօր մեզ նման, ճարահատ սքանչելի Ֆրանսիան, կուլ տալով Անգլիայից Փաշօտի ապտակները, ամենայն անկեղծութեամբ հաշտւեց Անգլիայի հետ և զինակցեց հետը։ Ֆրանսիան այդ մեծ զոհաբերութիւնն արաւ սոսկ իր սրտի բեկոր դէրն էլզաս Լորէնի համար։ Այս դարձեալ մի մեծ յաղթանակ էր Անգլիական դիպլօմատիայի։ Եւ սա ինքնավստահ հետեւեց Գերմանիայի դէմ պատերազմի, արդէն հաստատուած համարելով կռւածաղիկը։ Սակայն պատերազմի կէսին տեսնելով ռուների յաջողութիւնը և կասկածելով, որ ռուական բարձրագոյն հրամանատարն ու ինքնակալը կարող է նաւի դեկը շուռ տալ, սարքեց Բասպուտինեան աւանտիւրան, շատ անժամանակ յեղաշրջեց ռուական կայսրական գահը։ Իսկ Գերմանիան օգտւելով այս առիթից, պալատական յեղաշրջումը դարձրեց անիշխանական՝ համաուրասային, ու Լենինի ձեռքով շագանակները սկսեց մէկը միւսի յետեւից հանել։ Այստեղ ահա Անգլիական դիպլօմատեան ընկաւ թակարդի մէջ և անգլիական ինտրիգները դառն հետեւանքներ ունեցան։ Գերմանիան փաստօրէն Անգլիայի կոկորդից ժամս բռնեց։ Բաժան-բաժան անեւլով Ռուսաստանը և կովկասում և Ասդրկովկասում վերականգնելով մի շարք հանրապետութիւններ, գրանցօրէն այսուհետև Գերմանիան կիշխէ թէ Եւրոպային և թէ Ասիային ու Աֆրիկային, Անգլիական դիպլօմատիային դուրս յաջողի և վերջնվերջոյ կոմպրօմիսով Գերմանիայի հետ բաժանել աղեցութիւնները ի հեշիւ Ռուսիայի, բայց բնաջինջ անել Գերմանիային, չը պատ կարողանայ։ Արդիօք յաղթող Գերմանիան աւելի վեհանձն չը պիտի լինի այդ հրդեհից ըսկսած կայծերը՝ անմեղ ժողովուրդները փայփայելու և չբթողնելու որ մարեն, այդ ցոյց կըտայ մօտ ապագան։ Իսկ մենք դարձեալ մնում ենք մեր այն համոզման մէջ, որ մեզ հայերիս Գերմանիան աւելի է օգտակար եղել մինչև օրս, քան Անգլիան, եւ օգտակար է եղել, ոչ թէ այսօր, այլ շատ-շատ առաջ, երբ հայերը Անգլիայի փեշը միայն բռնած և թութակի նման Բիսմարկին, իբրև թէ ասածն էին կրկնում՝ ամբողջ հայերին չեմ փոխիլ եւ ոչ իսկ մի գերման անդամագրոյթի ոսկորների հետ։ Հետաքրքրական է, թէ այդ խօսքը ինչ է ասել Բիսմարկը և ինչ առիթով։

Թող յօշոտած, թշուառացած Հայաստանը չը յուսահատի, անդամնալոյծ մի գերմանի ոսկորների հետ ամբողջ հայերի հետ չը փոխող Գերմանիան կը շարունակէ դարձեալ հայերին տալ Ա. Աբօվեանները, Ստ. Նազարեանները, Պատկանեան-Դաւթեր-Դաւթեպանները, Գետ. Սիմոնեաններ, Գ. Բարխուդարեաններ, Գրիգոր, Անդրէաս Արծրունիները, Արգար Յովհաննիսեաններ, Սեդր. Մանդինեաններ, Փիլ. Վարդանեաններ, Աւետիք Արամեանները, Ս. Թառայեաններ, կարապետ, Գարեգին եպիսկոպոսներ, կոմիտաս վարդապետներն են. են.։ Իսկ հարկ կայ և նոյնիսկ հրնար կայ, գէթ մակերևոյթապէս թւել այն հարիւրաւոր գիտնական և այլ ասպարէզներում ալդի մեր գործիչներին, որոնք ուսանել են Գերմանիայում։

Մենք այսուհետև էլ աւելի կորեկտ լինենք և հետս արտերթ հային կարագ քսելուց, աւանութեան հետից չընկնենք, այլ շարունակենք մեր ոտկուն հալալ աշխատանքը, վստահ, որ շատ կարճ ժամանակի ընթացքում մեր ջանասիրութեամբ ձեռք կը բերենք արդարուր, յօշոտած արբազան, հայրենիքի համար փայլուն ու բարգաւաճ ապագայ։



ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅԿԱ

REDACTEUR EN CHEF ET DIRECTEUR

TIGRAN NAZARIAN

ԹԻՖԼԻՍ № 3-6 ՄԱՐՏ-ՑՈՒՆԻՍ 1918 XXIX TIFLIS



ՊԱՏՃԻ

✝ ԾՆԱԼ ՅՈՒՆԻՍԻ 8 ՄԱՀՃԻՍԻ (Հ. Տ. 25 ՄԱՐՏԻ)

ՎԱԽՃԱՆՔ XXX-ԱՄԵԱԿԻ ԱՈՒԹՈՎ.

ԱՐՑԻ

(Վկիզբը Տարազ № 1-2)

ՕՋԱԽ

IV

Տղերք, շատ ապրիք, իմարելթը վերջացրիք, սալեցիք և ծևփեցիք, այժմ մնում է կահաւորելը։ Շտապեցէք, այսօր վաղը կը գան ու կը հասնեն ողորմածի ծառան, Ֆակիրը և ընկերները։ Բանի դեռ չեն հասել, պիտի իմարելթի ճրագները պատրաստուին ու կախուին։ Վարպետ Մեխալ, քեզնից եմ պահանջում այդ ճրագը։

—Անհոգ եղիր, երեք օր յետոյ ճրագկալները և ջահերը իրենց տեղը կախուած կը տեսնէք։

—Իսկ եթէ մինչև այդ երեք օրուան լրանալը հասնեն, ասաց Ալայէդ-դին փաշան, մեր կտրիճները...

—Եթէ այդքան շտապ է, այս իրիկուն կախել կըտամ բոլոր ճրագկալները, որ յամենայն դէպս մըթնում չը պիշներեն մեր հաճելի հիւրերը, իսկ երրորդ օրը ջահերը պատրաստ կը լինեն։

—Իսկ դու ինչպէս արիր, վարպետ Կարօ, վերմակներն ու ներքնակները, ասաց փաշան։

—Արդէն պատրաստ են 3000 զոյգն էլ և դրւած են մթերանոցում։ Կը հաճիք տեսնել։

—Իսկ բարձերը։

—Բարձերի բամբակը զզւած է, պէտք է լցնել ու բերել։ Ես սպասում եմ այստեղ, որ բանուորները բերեն և յանձնեմ։

—Կարպետներն ինչ եղան, վարպետ Սարգիս։

—Ծանձւած են բոլորն էլ, եկել եմ ձեզնից խընդրելու, որ հաճիք վճարել։

—Ինչքան պիտի տանք, որ քեզնից ազատուենք։

—Հազար երկուհարիւր կարպետ է, այդքան էլ խոսիր։ Գինը դուք որոշեցիք՝ կարպետը հարիւր փարա, խոսիրը հինգ փարա։ Վեց քիսայ արծաթ և հարիւր յիսուն կուրուշ։

—Վեց քիսայ ստակ, այդքան փող ինչպէս պիտի տանես։

—Երեք քիսան դուք արդէն վճարել էք բուրդի համբը։ Մի քիսա էլ պիտի տաք ներկարարին, մի քիսայ էլ հիւաներին, որոնք գործիքները պատրաստեցին։ Մնացած մի քիսան էլ ես կը տանեմ, որ բաժնեմ հաար հինգ հարիւր բանուորներին, որոնք երեք ամիս աշխատեցան և գործեցին կարպետներն ու խոսիրները։

—Հապա երեք ամիս է նրանք ինչ էին ուտում, ասաց փաշան։

—Նրանք այդ փողը ետ են գցել, որ աշնան բանջողը պատրաստեն։ Ասաց վարպետը և մի քանի բոպէ լռելուց յետոյ, երբ նկատեց, որ Ալայ-էդ-դին փաշան մտածմունքի մէջ ընկաւ, ասաց։

—Ի՞նչ էք հրամայում, ձեր դիմեմ Նուռնուֆար խանումին, թէ Նուռնուֆար Գնտին։

—Ո՛չ մէկին, ոչ միւսին, այլ ինձ։ Իրիկունը եկ մեր տունը և ատապիր փողերը։

Այս ասելուց յետոյ, փաշան իր հետևորդներով դընաց ամբողջ շէնքը, որը բաղկացած էր չորս մեծ սրահներից, ամեն մի սրահը հարիւր քսան քայլ երկարութիւն ունէր և քսանը չորս քայլ էլ լայնութիւն։ Սրահների մէջ երկու շարք քսանը չորս զոյգ սիւներ էին շարւած որոնց վրայ էին բեռնաւած ամբողջ տանիքի ծանրութիւնը։ Սրահները պատուհաններ չունէին, այլ ամեն մէկ կողմից չորս-չորս դռներ ունէին միապեղկ, որոնք երկու կողմից ներքանցքների վրայ էին բացւում, երկու կողմից էլ պարտէզների վրայ, որտեղից մաքուր օդ և լոյս էին ստանում։ Սրահներից իսկական լուսամուտները տանիքից էին, թւով քսան չորս զոյգ, որտեղերից ներս էին թափանցում արևի ճառագայթները։

Ամեն մի սրահի երկու ծայրերում դեռեզած էին օջախները-վառարանները, որոնք ձմեռը վառւում էին սրահները տաքացնելու համար, իսկ միւս ժամանակները դրանց ճակատին վառւում էին ճրագները, սրբանները լուսաւորելու համար։ Վարպետներն չէին մոռացել և օջախի մէջ շարել էին երկաթի առոտանիները, որոնք իրենց կազմով աւելի նման էին ծովաձիուն։

Միայն տանիքի լուսամուտները, անփեղկ էին և անապակ էլ պիտի մնային, քանի որ նրանք ծառայելու էին նոյնպէս օդանցքի։ Որմերն արդէն չորացել էին յուլիսի և օգոստոսի ջերմ արևի տակ։ Ժանեակաւոր կրէ ծեփերը զարդարում էին պատի երեսները։ Երբ ամեն բան կարգին գտաւ փաշան, կատարի կըղմինդրն էլ վրնեց, ապա համոզւելով որ բոլորովին ապահովւած է զօրանոցը, կանչեց պահապաններին, բանալիները յանձնեց և ասաց։

—Ո՛չոքի չէք թողնել ներս մտնելու, ոչոք այստեղ չըպիտի գիշերէ մինչև ողորմածի ծառայի վերադարձը։ Իսկ դուք կապրէք դրսի խոհանոցում, գիշեր և ցերեկ կը հսկէք, կը պահպանէք, մինչև իմարելթը տէրերին յանձնելը։

Երկար դատարկ չը մնաց զօրանոցը։ Սեպտեմբերի սկիզբներին լուր հասաւ թէ իրար հետից վերադարձան իրենց պատւիրակութիւնից Ողորմածի ծառան, Ֆակիրը և հարամ Մուսթաֆան։ Ամենքն էլ իրենց հետ բերում էին մի հազարական մանուկ, որոնց հաւաքել էին Անգորաի, Կասթեմունիի, Սեվազի, Կայսորիէի, Սալաթիայի, Երզնկայի և Յարբերդի նահանգներից։ Մանուկների իննսուն տոկոսը հայ ծնողների զաւակները էին և բոլորին էլ հալեցրել, զարդարել, դինել ու թլպատել էին Բէկթաշի դերվիշները, որոնք համամարդկային հղբայրութիւն, հաւասարութիւն և անխտրութիւն էին քարոզում։

Ամբր Օրխանը, Ալայ-էդ-դին փաշայի, Քերսէ Մեխալի և սրա ձիաւորների հետ երեք ժամի ճանապարհ ընդառաջ գնացին մանուկների գնդին, գրկախառնեցան Ողորմածի ծառայի հետ, մեծ քաջալերով ժամն մայրաքաղաք՝ Բրուսա։ Քաղաքի ամբողջ արհեստաւորները զարդարել էին իրենց տներն ու կրը-

պակնոցի դռնակը դալար տերևներով, հասուն մրգերով, զովացուցիչ թրմով և օշարակներով։ Ալ ու ձախ մանուկներին քաղցրիղէն և խմիչքներ էին մատակարարում, որոնք վարկենաբար ընդունում և շարքերից առանց դուրս գալու շարունակում էին իրենց ընթացքը։

Ամիրայի սարայի դռան առաջից անցնելուց յետոյ հասցրին նրանց նորաշէն զօրանոցը, ուր երեք հարիւր զոհ էր դոհել Ամիրը, որպէսզի մատաղ բաժանէ մանուկներին և քաղաքացիներին։ Մատաղից յետոյ նրանց մատակարարեցին բրնձով փլաւ, մածուն ու մրգեղէն։ Այդ օրը ամբողջ քաղաքում մեծ տօն էր, ամեն մի գիտակից գործաւոր և արհեստաւոր եկեղեցական գնդերի ընդարձակումը և խաչացումը համարում էր բանուքեան շուտափոյթ կործանման ազդանշանը։ Արհեստաւորները, գործաւորները, պալտիզպաններն, ու այդպանները թողել էին իրենց գործը, ամենքն էլ զիմաւորել էին նորեկներին և ամեն մարդ իր սրտի հրճւանքն ու ուրախութիւնը արտայայտելու համար նորեկներին ողջունում էր։ Այդտեղ ինչպես զօրապետներն ու վարիչները շրջապատել էին նորեկներին, այլևայլ հարցեր էին տալիս, տեղեկութիւններ էին հաւաքում, այդպէս էլ արհեստաւորներն ու գործաւորները իրենց ծննդավայրերից եկածներին շրջապատել, բազմաթիւ հարցեր էին տալիս և պատասխանն ստանում։

—Եղբայր, ասաց կեղեցի դարբին Մարգարը՝ նորեկ Մինաս անունով մանուկներից մէկին, որն իր ծննդավայրից էր հասել, որքա՞ն ժամանակ է, որ դուս ես եկել տանից։

—Կը լինի երկու ամիս։ Իմացայ, որ Հրվնկայում դէրվիշները մարդ են հաւաքում, գնացի այնտեղ և միացայ Ղազրմածի ծառայի խմբին։

—Կեղեցի՞ ո՞ր գիւղից ես։

—Աստղկաբերդից եմ, բայց կեղեցում աւելի շատ եմ ապրել։

—Կեղեցում ինչ գործով էիր պարապում։

—Առաջ ծառայում էի Աստուածածնի վանքում։ Վանահօր մօտ մօնթ էի։ Ուստացաւ ինձ կարդալ-գրել սովորեցնել, բայց այնքան տանջեց, որ առանց տառեր ճանաչելու փախայ վանքից, գնացի աշակերտ մասյ ճախարադործ Բաղդօյի մօտ։

—Այդ ո՞ր Բաղդօն է։

—Արծնեցի Բաղդօ են ասում նրան, կեղեցի ամենալաւ ճախարակադործն է։

—Արծնեցին դեռ ողջ է։

—Երևք տարի առաջ մեռաւ։ Ես նրա տղաների մօտ էլ աշխատեցայ, բայց այն հռչակը մեռաւ, ինչոր ունէր վարպետ Բաղդօն։ Մի ժամանակ ամբողջ գաւառի ճախարակները նա էր պատրաստում, բայց այժմ նրա աշակերտները աւելի լաւ դիրք գրաւեցին, քան թէ զաւակները։

—Դարբին Գալօյին ճանաչո՞ւմ էիր։

—Էլ ոնց Գալօյին ո՞վ չի ճանաչում աստնում։ Միտաւ ձերունին ամուռս, իր որդիների կարօտը սրտին։ Նա ասում էր եօթն էլ արհեստ սովորեցրին, գլխներն առան օտար աշխարհներ գնացին ու կորան...։ Աղջիկներից շատ լսի էր, եօթը փեսաները նրա դիակը վերցրին և ամբողջ ազգականութեան հետ տարին, հողին յանձնեցին։ Երանի՛ նրան, որ արժանացաւ պապերի ոսկորների մէջ թաղուելու։

Մինչ Մինասը պատմում էր վարպետ Գալօյի թաղման մանրամասնութիւնները, դարբին Մարգարի մրտա աչքերից վար գլորւեցան մարգարտանման արտասուքի խոշոր կաթիլները։ Օրհնեց վարպետը իր ազիկներին, թոռներին, ծոռներին և փեսաներին, հառաչեց, հառաչեց և մեռաւ։ Նա ամվերջ կրկնում էր —«ախ, որդի, ախ, որդի.» կեղերում մարդ չէրկար, որ չըվշտակցեր Գալօյին, շունչ չէրկար, որ չէրկարեկցէր։ Նրա արհեստանոցի առուշանը ճնաց փեսաներին։ Բայց նա կտակեց, որ երբ էլ վերադառնան որդիները, կամ նրանցից մէկն ու մէկը արհեստանոցը նրանց յանձնի։

Վարպետ Մարգարը այլևս չը կարողանալով դիմանալ, սկսեց հեկեկալով լալ։ Այդ նկատելով Մինասը, ականջ լոից և սկսեց զննել Մարգարի մրտա դէմքը, կնճռոտ ճակատը և կոշտացած ձեռքերը։ Թէև շուտով ղեկատացաւ Մարգարը, սթափւեց և զսպեց իրեն, բայց Մինասն արդէն նկատել էր տարագրեալի հոգեկան յոյզերը, որոնք ալեկոծեցին և իր սիրտը։ Մի քանի րոպէ դատարեց։ Յետոյ հարցրեց.

—Վարպետ, դուք ինչ կապ ունիք հանգուցեալ վարպետ Գալօյի հետ։

—Նա իմ պապս էր։ Հայրս փախել էր տանից և քնակութիւն հաստատել Բիլէջիկ։ Նա շատ էր պատմել ինձ իր հօր անցեալից։ Ձեր պատմութիւնը հոգիս խըռոովեց։

—Ուրեմն դուք էլ կեղեցի էք։

—Ես չէ, հայրս պարծենում էր կեղիով։ Նա շատ էր մտածում վերադառնալ, բայց չը յաջողեց։ Այնտեղ այնպիսի դազանների հն բուն դրել, որ դրանց ճիրանների տակ ապրել անհնար է։ Նախ պէտք է, այս կողմերը մաքրել և ապա նրանց աղատութեան մասին մըտածել։ Միայն մեր միութիւնը կարող է փրկել մարդկութիւնը բռնաւորներից։ Մինչև որ չըփշրւի Բիւզանդական կայսրութիւնը, սեպհականութիւնն ու բռնակալութիւնը չի բնաջնջւիլ։

—Մինչև որ չը ջնջւին Տուղրիլի, Ծուլաքուի և Աբաղա խանի ժառանգորդները, թոռները, աշխարհը չի խաղաղւիլ։

—Անհոդ եղիր, բարեկամ, այնպիսի հիմք ենք դրել, մեր միութիւնը այնպիսի ապառաժոտ լեռներ է հարթել աշխարհի երեսին, որ ամեն տեղ պիտի ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն թագաւորէ։

—Մենք էլ այդ յոյսով միացանք Ղազրմածի ծառայի հետ և հասանք Իրուսա, մենք էլ միայն այդ ձգտումով զօրանում ենք Բէկթաշի միաբաններին, որպէսզի կործանենք բռնակալութեան օրջը — Բիւզանդիոնը։

—Մենք այնպիսի սկզբունքների վրայ ենք հիմնած մեր միաբանութիւնը, որ նա յաւիտեան անխախտելի պիտի մնայ։ Մենք տէր չունենք, մենք աղա չունենք, մենք բոլորս էլ հաւասար եղբայրներ ենք։

Բայց էլ ինչ էք դանդաղում, ինչի չէք ձգտում օր առաջ արձակելու և գրաւելու Բիւզանդիոնը։ Դեռ ո՞րքան ժամանակ էլ խաւարը պիտի տիրէ մեր երկրին և թշուառը պիտի հառաչէ բանտերի ոտքերի տակ գլորւած։

Հապա ինչի ենք մենք պատրաստւում, էլ ինչի ձիով հրաւիրեցինք։ Համբերէք, այնքան համբերել էք, մի քիչ էլ կարելի մի քանի ամիս էլ տոկալ, մինչև որ այժմեան ամփոփենք, պատրաստութիւններս տեսանենք և այնպէս հրապարակ ելնենք, որ թշնամիներս սասանենն, մեր ոտքերն ընկած գթութիւն խնդրեն։

Այդ անթծած հուռութներին չը պէտք է խնայել, չի կարելի գթալ, նրանք անգթաբար միայն կոտորել ու կեղեքել են մեզ և մեր պապերին։

Այդ բոլորն էլ կատարել են անգթութեամբ, անզգայաբար։ Նրանք կարծել են թէ բարիք են կատարում,

բայց ամենամեծ չարիք են հասցրել մարդկութեան։

Նրանք կոյր համոզմունքով աշխատել են մեզ կլանել, մեզ մոռացնել տալ մեր լեզուն, մեր պատկերի հաւատքը, մեր սովորութիւնները։ Նրանց միակ ձգտումն եղել է տիրել մեր հողերին, մեր պատանիներին և հարկի տակ գցել ամեն մի թիզ հողը։ Իրենց անխիղճ հարկահաններով մեզ կողոպտել, մեր կաշին քերթել և մեզ գրաստի նման միայն բանեցնել։

Այո, այդ է եղել Բիւզանդիոնի բնակչների ճշգտումը. սարկացնել, անասնացնել և ուրիշի երակների արիւնը ծծելով ապրել։ Ամբողջ Փոքր-Ասիան, Հայաստանն ու Կիլիկեան, Միջագետքն ու Սուրեան պարերով կողոպտել են Հռոմները և սրանց ճակատի քրտինքով դիզած բարին ու հարստութիւնը քաշել, տարել են դէպի Պոլիս ու անխնայ շռայլել։ Մեր եղբայրութեան սկզբունքն է ժողովուրդն ու երկիրը ապառնալ այդ գազանասիրտ հարկահաններից։ Ես զգուշեմ, ողոմածի ծառան շատ մեծ հմտութեամբ քարոզել և բոլորի աչքերի վրայից խաւարի քօղը պատռել է ու լոյս աշխարհ դուրս բերել։ Բայց մենք հա մնացինք, գնանք առաջ, հանդիսին նորից լինենք։

Երբ հասան իժարէթի առաջ, շարքերով կանգնեցան ողոմածի ծառայի հազար մանուկները, Իէկիթալի Թէքքէլի մեծաւորը նրանց սրերը օրհնեց և մաղթանք կատարեց։ Ապա սրտի խորքից բղխած խօսք ասացին, ճաշեցրին Թէքքէլի փորձառու մի քանիները, խրախուսեցին մանուկներին, որոնց ճաշի հրաւիրելով, նստան պարսիպի դալաքների վրայ, կերան և կշտացան։ Մատաղն այնպիսի մեծ քանակութեամբ էր պատրաստուած, այնքան առատ էր հացն ու պտուղը, որ ամբողջ քաղաքի արհեստաւորն ու բանւորը մասնակցեց այդ խնջոյքին։ Խնջոյքին մասնակցում էին ոչ միայն հասարակ բանւորները, այլ ամիրի ծոլոր պաշտոնակալները, որոնք այնպիսի դիրք էին բռնած, որ չէին զանազանւում աշխատաւորներից և չինիչերիներից։ Ծերն ու երիտասարդը, զօրականն ու պինուորը, բանւորն ու արհեստագէտը կողք կողքի նստած ճաշում և զրից էին անում հաւասար եղբայրների նման։

Այս ընդունելութիւնը այնպէս էր ոգևորում ու մխիթարում մանուկ չէնիչէրիներին, որ նրանք, պինովուած այդ անկեղծ գրկախառնութիւններից, պատրաստ էին ոչ միայն իրենց ոյժի ամբողջ թափով յարձակուելու թշնամի քաղաքների և բերդերի վրայ, այլ և զոհելու, որպէսզի աշխարհին տիրէ ազատութիւնը, հաւասարութիւնը և եղբայրութիւնը։ Թէև բոլորն էլ տոգորուած էին ներկայ կեանքի բարելաւդ պայմանների մէջ գնելու ցանկութիւնով և լաւ ապագայ ձեռք բերելու տենչերով, բայց ոչքի սրտի խորքերից չէին հեռացած տխուր անցեալ դառն յիշատակները։ Ամեն մի խմբի մէջ որևէ նորեկ մանուկ պատմում էր իր ծննդավայրի արկածների և անցքերի մասին հետաքրքրուած արհեստաւորներին, որոնց հարցերին պատասխաններ էին տալիս հնարաւոր ժանրամասնութիւններով։ Որքան եռանդով էին նկարագրում իրենց տխուր անցեալը պատանիները, այնքան աւելի էին բորբոքում շրջապատող ունկնդիրների սիրտը, որոնք իրար հետևից նորանոր հարցեր էին տալիս և պատասխանները լսում։

Վերջալոյսից յետոյ ճարպէ մոմերը վառեցին իմաըէքեում և մանուկներին առաջնորդեցին զօրանոց, որտեղ ամեն մէկին յանձնեցին իր կարպետը, որի մէջ փաթաթած էր իր ներքնակը, վերմակը և բարձը։ Ի-

ԻՄԱՐԷԹԸ

մարէթը լուսաւորուած էր ճրագալոյծի յատուկ ճոխութեամբ և ոչինչ չէր խնայուած։ Ագնանոց մանուկների հետ նոքա մտան ինչպէս Ողոմածի ծառան և ուրիշ առաջնորդներ, նոյնպէս և Իրուսայի արհեստաւորներից, բանւորներից շատերը։ Ամեն մի բանւոր չէր կարողանում բաժանել իր նորեկ հայրենակցից, որ նրա սիրելի ծննդավայրից սրտին շատ մօտիկ տեղեկութիւններ էր բերել։

Թմբուկի ու փողի ձայնը անվերջ շարունակւում էր, գալաղներից շատերը իրենց պարը բոլորած երգում և թռչկոտում էին։ Օշարակն ու թանը անխնայ տրւում էր պահանջողներին։ Մի քանի անգամ բոված և խաշած շաքարնակ բաժանեցին պինուորներին։ Խաղողը քիլոներով դրւած էր զօրանոցում, որից անարգել օգտւում էին բոլորը։

Արհեստաւորներն ու բանւորները պիշերը երկար չէր մնացին զօրանոցում, նրանք նկատեցին, որ իրենցից աւելի շատ կարիք ունէին պատանիները հանգստանալու և քնելու, քանի որ նրանք առաւնեհինգ օր շարունակ հետի ճանապարհ էին եկել և յոգնեցրել էին իրենց անդամները։ Ընդրիքից յետոյ ամեն մի պինուոր տարածեց յատակի վրայ իր անկողինը, անձնատուր եղաւ մորիէոսին, որն իր թևերը տարածելով բոլորի աչքերը փակելու։ Սակայն նրա գործը չը հեռացաւ նրանց մտքից և նրանց աչքն էլկին մարով տարաւ ծննդավայրը, հարազատների շրջանը նրանց հետ զրից անելու, կարօտն առնելու և սրտերի վիճակի հետ ծանօթանալու։ Ամեն մի պատանի սիրտ, ամեն մի կարիճի հոգին իր ծննդավայրի, հայրենի օջախի հետ այնպիսի ջղերով ու լարերով էր կապւած, որ անվերջ մինչև լոյս այն շրջանից չը կարողացաւ դուրս գալ։ Ամեն մէկին թւում էր թէ իր հայրենի խրճիթը անհամեմատ գեղեցիկ էր Օրխան ամիրի կառուցած իմարէթից։

Դեռ լոյսը չը բացւած ամեն մի հարիւրապետ վեր

կացաւ անկողնից ու ձայն տւեց իր օգնականներին և նրանց հետ դուրս եկան զօրանոցից, դիմեցին իրենց բացօդեայ խոհանոցը, վառեցին իրենց կաթսաների օջախները, որպէսզի չորքս-ապուր պատրաստեն իրենց հարիւրապետի համար։ Ամեն մի հարիւրապետի համար երկու խոյ էր պատրաստւած, որոնց խոկոյն մորթեցին, մաքրեցին ջարդեցին և լցրին կաթսաները։ Ամեն մի հարիւրապետի համար բերւած էր մի մի լիտր ըլղուր, և ուրիշ համեմներ, որոնք լցրեցին և արեւակէզին պահեցին եռալ, եփ գալ, որպէսզի կշտացնեն մանուկներին։ Իսկ արեը դեռ չեկած պատանիները զօրանոցից դուրս թափւեցան, լացւեցան, դիմաւորեցին լուսաբերին, որը գալիս էր մանուկների պաշտելի ծննդավայրից։

Մարդիկները իրար հետից դուրս եկան հրապարակ և փողերի ձայները պատանիներին խմբեցրին իրենց շուրջը, որոնք «Եա հուա» կանչելով հարւածները էին տեղում խաղիքի բարձերին։ Քառասուն տակ ոլորւած խանձր խաղիքները հուժկու բազկի սրի մի հարւած ով կտրում թափւում էին գետին։ Ամեն մի յաղող սրի հարւած շրջապատողների սրտի խորքերից դուրս էր կորզում խրախուսող բացականչութիւն և քրքիչ։ Ողորմածի ծառան խմբակների շուրջն էր բոլորում, անձայն փորձեր էր կատարում, գովում էր ընդունակ և յաղող պատանիներին։

Չորքան կաթսաների մէջ եռ էր գալիս, իսկ չորքային (հարիւրապետ) ապուրի աղը լցնելով, ասաց իրեն հետեւողներին (օգնականներին)։

—Մենք այսօր ամբողջ երկրի ուշքն ենք գրաւած։ Ինչպէս որ մի հարիւրեակ աչքերը չռած սպասում է մեր ապուրի եռ գալուն, որպէսզի փորերը կշտացնեն, այնպէս էլ ամբողջ Բիւզանդիայի աչքը մեր կողմն է յառած, թէ երբ պիտի եփենք բիւզանդացիների ճաշը, պիտի ազատենք Նիկիայի, Նիկոմիդեայի, Քալքեդոնի, և Արեւպոլսի ժողովրդապետին բռնակալ կայսրների ճիրաններից։ Ամենքն էլ անհամբեր սպասում են մեր ապուրի եռ գալուն։ Մենք չը պիտի քնենք, մենք պատկելու համար չենք ստեղծւած, մեզ հարկաւոր է գործել։ Ամբողջ երկրի ազգաբնակութեան յոյսը մեր վրայ է, ամենքն էլ սպասում են այն ժամին, որ մենք փըշրենք բիւզանդական կայսրական լուծը և մեր հարազատների ազատենք հարկահանների անխիղճ կողոպուտներից։

—Չորքային, ասաց հաւաղներից մէկը, հողերն որ ազատենք կայսրական հարկահաններից, ամիրապետի մուրաշներից և մուխլկիմներից և թոյլ չըտանք, որ դրանց վրայ հարկերը դրւին, հապա ինչ հասոյթով պիտի ապրեն մեր ամիրը, զաղին նէնիչար-աղան, ձիաւորներն ու հետեւակները։ Չէ՞որ դրանց ապրուստի մի աղբիւր է պէտք, որպէսզի նեղութեան ժէջ չընկնենք։ Եթէ այսօր ամիրը մեզ ուզարկած չըլինէր ոչխար, կորկոտ, համեմունք, վառելիք, ինչով պիտի չորքա եփէինք, որպէսզի կշտացնէինք մանուկներին, Չէ՞որ ամեն օր պէտք է այս չորքան, որպէսզի ապրինք ու զործնք։

—Այո, ամեն օր պէտք է, բայց չէ՞որ մենք ամենքս էլ անդամլոյծ մարդ չենք, կարող ենք աշխատել։ Այսօր մենք դնում ենք երկիրն ազատելու բռնաւորներից, բայց վաղը երբ չընչացինք բռնակալութիւնը, ամենքս էլ անխտիր աշխատող ձեռքեր ունենք և պիտի շարունակ գործենք։ Մենք նէնիչարի չենք և կը մնանք միշտ, որպէսզի բռնաւորներին սանձենք, բայց ինքներս երբէք բռնակալներ չըպիտի դառնանք մեր աշխատաւոր եղբայրների դլխին։ Մեղնից որ մէկն անընդունակ է աշխատելու։ Ամենքս էլ մի մի արհեստ գիտենք, ամեն մէկն էլ կարող է առանձին կեանքում իր հասոյթով ապրել ու կարող ենք երկրագործ լինել, պարտիզպան, ջուլհակ, դարբին, հիւս ու հանքագործ և պահպանել մեր գլուխը։

—Ուղիղ էք ասում, չորքային, բայց երբ տարիներով վարժւենք պատրաստւած հաց ուտելու, այնժամանակ կը կորցնենք աշխատելու ընդունակութիւնը. կամաց-կամաց պիտի ուրիշի պատրաստածները յափշտակենք և ուտենք։

Թէ մենք կարողանանք էլ ապրել մեր աշխատանքի արդիւնքով, մեր սերունդը կապականւի և կը պահանջէ, որ երկրի ազգաբնակութիւնը նրանց ապրուստ տայ։

—Եղբայր, դուք չէք ընդունել ուրեմն Բէկթաշի վարդապետութեան հիմունքը,—հողն ու արհեստաւորը երբէք չըպիտի հնթարկւի հարկի։ Մեր օջախի, նէնիչարական օջախների գոյութիւնը նրա համար է, որ ոչ մի բռնաւոր չը համարձակւի հողն ու արհեստաւորը հարկերի տակ ճնշելու։ Այնօրը երբ իր կոչման չի ծառայելու նէնիչարական օջախը նոյն օրը, նա կը կործանւի։

—Լաւ, ահա մենք, ինչպէս պիտի կարողանանք մեր ճաշն ունենալ, մեր հագուստը ձեռք բերել, մեր զէնքերը գնել, եթէ որ պետական-հանրական գանձարան չունենանք, եթէ գնանք մեր ապրուստը ճարելու, օջախի գործը կանգ կառնի և նէնիչարին չի կարողանալ պատերազմի դաշտն երթալ։

—Եղբայր, սա ժամանակաւոր մի շրջան է, որ շուտով կանցնի։ Այսօր Բուլղարիայում հինգհազար նէնիչարի կայ, որոնք ունեն իրենց անհատական զբաղմունքն ու արհեստը, ապրում են իրենց վաստակով։ Երբ պատերազմի փողը հնչէ, նրանք բոլորն էլ զէնքերը ձեռքերնին, կը վազեն կռւի դաշտը մեր եղբայրութեան դրօշակը բարձրացնելու։ Երբ պատերազմը դադարի, նրանք դարձեալ իրենց արհեստանոցները կը վերադառնան։ Մեր օջախների սկզբունքն է ազատել ժողովրդին հարկերից և կայսրական կեղեքումներից։ Եթէ վաղը մենք ինքներս հարկեր սահմանենք, մենք կը դառնանք նոյնպիսի կայսրական բռնակալներ, ինչպէս են Հռոմէները։ Պիտի կործանենք կեղեքող կայսրութիւնը և պիտի յափշտակենք իշխաններին իրացրած այն կալւածները, որոնք աշխատաւորի անձեռնմխելի սեպհականութիւնն է և պիտի նրան յանձնենք։

—Չէ՞որ այդ ժամանակ ժողովրդից դուրս կը գան այնպիսի մարդիկ, որոնք կը խլեն, կը գնեն նրանց ընկերներից-դրացիներից հողերը և կը դառնան իրենց եղբայրների կեղեքողներ։

—Բէկթաշի օրէնքների համաձայն ոչոք իրաւունք չունի իր ոյժը պատճառ ւնելի հողը իւրացնելու, մանաւանդ որ հողը սեպհականողը այն պիտի մշակէ և արդիւնաբերէ, անմշակ և ապարդիւն թողնւած հողը ամեն մարդ անարգել կարող է իւրացնել և մշակել։ Հետեւաբար մինչ հարկաւոր է սեպհականելու անգին հողեր, երբ նրանք պիտի անմշակ մնան և ամեն անհատ իրաւունք պիտի ունենայ նրանց իւրացնելու։ Ո՛չոք իրաւունք չունի գերի դնելու և գերիների ձեռքով երկիրը մշակելու։ Ո՛չոք իրաւունք չունի հպատակներ ունենալու և սրանց հարստահարելու։ Գերութիւնը ջնջւած է, ստրկութիւնը վերացւած, ամեն մարդ հաւասար է, կրօնի, տեղի խարութիւն չկայ։

—Ուրեմն մեր թշնամի հռոմէները կայսրական հպատակութիւնից ազատւելուց յետոյ, այլևս մեզ չեն հրապատակելու, այլ մեզ հետ հաւասարւելու են։ Նրանց մշակած հողերը իրենց սեպհականութիւն պիտի մնան։

—Անշուշտ, ասաց վճռական տօնով չորքային, այլևս չըկայ մահմեդականի և քրիստոնեայի մէջ որևէ խըտրութիւն, Հրէա թէ կռապաշտ, հաւատացեալ թէ անհաւատ հաւասար են։ Մենք ժողովրդի դէմ չենք կռւում, մենք իշխաններին և կալւածատէրներին ենք ուզում կործանել։ Ժողովուրդն ինչ մեղք ունի, նա իր քրտինքի վաստակը այլևս չպիտի լցնէ բռնաւորի ամբարը։ Փողը հնչեցրու, ապուրն եփաւ։

ՄԱՀԳՈՑԺ

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱԳՍՈՒԴԵԱՆ

Անակնկալ, անսպասելի մահով երկինք սլացաւ, երիտասարդ, գիտնական, արուեստագէտ, ս. Էջմիածնայ միաբան. անդամ Գէորգեան Ճեմարանի ուսուցչապետ, Պարիզի լեզուաբանական ընկերութեան անդամ, Տարազի աշխատակից, Իրական-Գեղագիտական Սալօնի անդամ. Տ. Մեսրոպ վ. Մագսուդեանը: Հանգուցեալը ծնուել է Ակնում 1876 թ., ուսումը ս. Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանն ստացաւ յետոյ, իբրև Ղուկասեան անն. ուղարկուեմ է Պարիզ լեզուաբանական գիտութեան մէջ կատարելագործուելու: հայագէտ ուսուցչապետ Մեյիէի ղեկավարութեամբ վարդապետ է ձեռնադրուել 1902 թ.



Բժշկապետ Ցովհաննէս Դաւթարեան

և իբրև քարոզիչ, վանահայր, առաջնորդ. տեղապահ պաշտօններ է վարել Ախալքալաքում, Ուրմիայում, Թաւրիզում, Ագուլիսում, Բիշևնում: 1902 թ. Պարիզի համալսարանին ներկայացնում է իր գիտական մի աշխատութիւնը Le parler Armenien d'Akn և սոանում դոկտորութեան գիտնական աստիճան: Ապա ստանձնում է ս. Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանում ուսուցչապետութեան պաշտօն, իր ունկնդիրների մեծ սէրն ու համակրանքը վայելելով: Միաժամանակ շարունակում է գիտնականի սրչագրական գործունէութիւնը, աշխատակցելով Ararատին, Տարազին, Ծողովածուին եւն.: Գրել, թարգմանել և հրատարակել է առանձին գրքոյկներով Օտար վունջը, Վիսայի Շակունտալա հնդկական պօեմը (ֆրանսերէնից), ոչից կտորներ տպագրել է և Տարազում, ինչպէս և Ալֆրէդ դ'Միւսէի La nuit de Mai ևն: Գրական-Գեղագիտական Սալօնում դասախօսել է Շակունտալաի մասին, ինչպէս և արտասանել յուշարէն, Ֆրանսերէն, պարսկերէն մի քանի բանաստեղծութիւններ, մասնակցելով գիտական, արուեստագիտական վիճաբանութիւններին, միշտ համակրելով և օտարներին իր պերճ ու վայելուն ճարտարախօսութեամբ, գիտնական մեծ պաշարով, սուր յիշողութիւններով: Ուշագրաւ է մանաւանդ Տ. Մեսրոպ Մագսուդեանի մանրանկարչական մի ուժգ, գեղ անտիպ, ժողովածուն, որ հայ ձեռագիրներից արտանկարել էր ամենամանրակրկիտ ճշտութեամբ: Հանգուցեալը կատարեալ արուեստագէտ էր թէ ներքին իր կրակով, աշխուժով և թէ արտաքին գեղ ու վայելուչ շարժուձեւերով, գիտնական էր և բանաստեղծ, հայրենասէր և տաքուած հայրենիքին և նրա եկեղեցուն սպասաւորելու վառվռուն ունէիրով: Մեսրոպ վ. Մագսուդեանի վաղաժամ և անակնկալ մահը մեծ կորուստ է մեզ համար: Յաւերժ յիշատակ Տ. Մեսրոպ վ. Մագսուդեանին:

ԲԺ. ԼԵՒՈՆ ԱՓԱՐԵԿԵԱՆ

Ամեն ծագիր ևս դէն կը ծպտեմ, երբ նա գեհեզմանեանով միայն պիտի ծածկէ իմ հայրենի երկիրը:
ԼԵՒՈՆ ԱՓԱՐԵԿԵԱՆ

Մարտի 24-ին Բաքւում յեղափոխական կուսակցութիւնների ընդհարումները խաղաղացնելու համար կուռդ կողմերից մէկի սմարդի գնդակով սպանուեց ժողովրդի անկեղծ բարեկամ, նրա շահերին անեղր պաշտպան, ճշմարիտ հայրենասէր գործիչ, սոցիալ-յեղափոխական, հռետոր և բանաստեղծ բժ. Լեւոն Աթաբեկեան: Ջը նայած իր մատաղ հասակին, կրել է իր հասարակական գործիչին վայել ամեն կսկիծ ու դըժբաղդանք: Նստել է բանտ, ուր յօրինել է ժողովրդական դոհար ոտանաւորները և Ղարաբաղի քարքառով: Մի քանիսը ևս լոյս են տեսել վերջին ժամանակներս ընտրած էր ա՛դամ և Հայոց Աղդային Խորհրդին: Ծնուել է Շուշում. մայրը հասարակական ընտիր գործիչ տ. Դալեանէ Գանջեցեան-Աթաբէկեան, հայրը իրաւաբան, սիրուած ամբողջ Ղարաբաղում. Մանրամասն կենսագրութիւնը պատկերի հետ կը տպագրուի Տարազի յաջոր կ ալմանախի մէջ. Նուիրուած յիշատակութեանը:

Մեսրոպ վարդապետ Մագսուդեան
Ծնած 1 ապրիլի 1876 թ. Ակնում † Ս. Էջմիածնում 11 փետր. 1918 թ.

ԲԺԶԿԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԱՐԵԱՆ

Փետրուարի 20-ին Թիֆլիսում վախճանուեց զառամեալ հասակում, կովկասի սահմաններիցն էլ շատ հեռու հռչակ ստացած, նշանաւոր բժիշկ Յովհաննէս Դաւթարեանն: Տարիներ առաջ տպուած է մանրամասն կենսագրութիւնը Տարազում: Հանգուցեալը ծնուել է Շուշում և կարողութեան մի մասն էլ կտակել է իր ծննդավայրին հիւանդանոցական նպատակների համար: Ղարաբաղցուն յատուկ ժայռ կամքի, հաստատամտութեան, ջիտակութեան պատճառաւ չէր սիրուած ոչ իր ընկերակիցներից և ոչ իսկ իր հիւանդատէրերից, որովհետև խստապահանջ էր և բժշկական իր խորհուրդները չէր կատարող հիւանդին երեսի վրայ էր թողնում հեռանում և ոչ մի պայմանով չէր բժշկում այդ տեսակ հիւանդներին: Տունը կատարեալ ուխտատեղի էր Թիֆլիսում և հէնց Կովկասի ամեն կողմից եկող հիւանդներն էլ գնում էին նրանից կատարեալ առողջութիւն: Մինչև վերջին տարիները էլ կաքսում էր թէ մասնագիտութեան վերաբերեալ հանդէսներ, չյաջողուեցաւ գնում էր Եւրոպա, ուր ցանկալի հիւր էր այնտեղի պրոֆեսոր

իր ընկերակիցներին շատերին, որոնց կլինիկաներում հետները նոր բանոր փորձեր էր անում։ Հասարակական կեանքից հեռու, ոչ մի տեղ չէր երևում։ Ուխտեալ մշակական էր։ Կուրիոզներ շատ ունէր. օրինակ հրաժարուել էր իր հայրենակից բարեգործ Առաքել-ապէր Ծատուրեանին բժշկելու, որովհետև սա Մակար կաթուղիկոսին բարեկամ էր, և ինչ որ մի անհաճոյ գործ էր ստիպել Մշակի դէմ։ Կամ չէր ընդունել պ. Միքայել Արամեանցի որդուն, որին պէտք էր խորհուրդ տար թէ Բերլինում որ պրօֆեսորին դիմէ, սոսկ այն պատճառով, որ հայրենակից Մ. Աբամեանցը Անդրկովկասում և բազում ուրիշ տեղեր կառուցանելու համար մեծագումար նէֆերներ էր տալ։ Այդ բոլորը ժամանակին լոյս կը տեսնեն մեր «Ղարաբաղ և Ղարաբաղցիներ» հրատարակութեան մէջ։

Թաղումը կատարուեց շատ համեստ, մարմինը ամփոփուեց Խօջիվանքի հանգստարանում։

ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿԵԱՆ

Ծն. Վանում 1885 թ. ✝ 1918 թ. ապրիլի 15-ին Օրկոֆում։

Վարդան, դու Վարդան,
Ձայնիկս լսէ, ասէր ինձ
պատասխան...

Երբորդ տարին Թիֆլիսում թևակոխած Վան-Տոսպը խմբագրում էր մեզ մօտ և Վարդանը առաւօտից մինչև երեկոյ նստած էր իր գրասեղանի առաջ մեր դահլիճում։ Եւ առն առաւօտ բարիլուսի փոխարէն նրան ողջունում էինք՝ Վարդան, դու Վարդան, տուր ինձ պատասխան...

*Իսկ այդ պատասխանները տալիս էր նա իր բարի դէմքով Սուրէնի, Վրթ. Յոյսրի, Ա. Հրաչեանի, Սրինգի, Զաբելեանի, Ս. Արծրունիի. Անբակում՝ի աստղաղրութիւններով Վան-Տոսպի մէջ, որ լոյս էր տեսնում իւրաքանչիւր շաբաթ և որի ոչ միայն խմբագիրներից մէկն էր Վարդանը, այլև նրա ոգին ու սրբագրիչը։ Բնաւորութեամբ հեզ, սիրած ընկերներից, հայրենասէր և իսկական ղրկան դէմք։ Համոզումներով սահմանադիր ռամկավարական։ Թիֆլիսում կրել է նեւրաթական ամէն ղրկանք, սպարտայու նման վարժուել էր տաժան կեանքին, որ ստանում էր ամէն վայրկեան իսկ վերարկու չէր հագնում, ցամաք հայով, ամբողջ օր աշխատելուց յետոյ, հազիւ էր յաջողում իր քաղցը վանում պատանեկական արշալոյս օրերից մինչ դիրն ու դրիչը ձեռքին, իսկ վանի նշանակալից, ուշադ, պատմական օրերին վառօդ պատրաստող, վառօդի գործարան հիմնող և ղէնքը ձեռին առաջի շարքերում։ Վերջին այս չարաբաստիկ դինուորակոչին էլ ականջ չէր դրեց ընկերներին, այլասեռածներին, Թիֆլիսից Քոռու կրկին Վան և Օրկոֆի կռիւներում իր սակաւաթիւ ընկերների հետ այս տարուայ ապրիլի 15-ին հերոսական մահով պսակուեց ու սրբացաւ երկինք Մեծ Վարդան Սպարապետ մօտ զեկուցանելու, իր սրբազան Հայրենիքի փրկութեան, դարձեալ ուշադ, անկարելիութիւնը, քանիորմէնքան-մէնքան այլասեռուած է սրդի հայ նորագոյն սերունդը։

Մխիթարեանք գէթ որ վարդապետի նման անբիծ պարտաճանաչ, անձնուէր, հայրենասէրներ էլ կան մեր մէջ, որ վարդանման իրանց սուրբ ու անարատ արիւնով քաւում են անհամար այլասեռածների դաւաճան անտարբերութիւնը։

Յարգանք և յաւերժ յիշատակ վարդան Պապիկեանին։

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ԾՆՆԴԵԱՆ ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԲԻՐԹԷԼԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ



ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԷԼ
Բ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1818-1918

Ներկայ յունիսի 1-ին (հ. տ. 19 մայիսի) լրացաւ հայազն, վրաստանում նշանաւոր պետական, զբրական, հրապարակագրական, թատրոնական և հասարակական գործիչ իշխան Միքայէլ Բիրթելեան Թումանեանի ծննդեան հարիւրամեակը։ Ծնուել է 1818 թ. յունիսի 1-ին Գորու մօտ Խելաւրանի տոհմ. դիւղում։ Ուսումն ստացել է Թիֆլիսի գիմնազիոնում և աւարտելուց յետոյ մտել է տեղական կառավարչ. մէջ պետական ծառայութեան։ Լուրջ, կարևոր և հիմնաւոր հետազօտութիւնները սրա, նամանաւանդ Վրաստանի գիւղացիական իրաւունքների, խիլանների և առհասարակ Անդրկովկասի գիւղացիների շուրջ, պետական և զրական աշխատութիւնները ճանաչած էին շատ անհրաժեշտ նիւթեր, որոնք և ծառայեցին դիւղացիական ռէֆօրմները Անդրկովկասում մտցնելիս, ինչպէս և մատակարարելուն նիւթ պատմա-դէտներին։ Աշխատել է վրաց և ռուսաց պետրբերական թերթերին հրապարակախօսական, քննադատական, բանասիրական յօդուածներով։ Ցայտնի է վրացիների մէջ և իբրև բանաստեղծ, որոնցից մի քանիսը թարգմանուած են վրացերէնից և ռուերէն։ Վրաց թատրոնի հիմնադրուն ջատագովն է եղած և իր դուստր Անաստասեան հարս գնալով հրապարակախօս Գ. Ծերեթելուն, հիմնում է վրացերէն մանկական ՋԷՋԷլի ամսագիրը, որ հրատարակուում է մինչև օրս էլ, ապա Կուալի վրացերէն շաբաթաթերթը։

Իշխան Միքայել Թումանեանի որդիքն են՝ Գէորգ, Վասիլի (հանգուցեալ) և Կոստանդին իշխանները, որոնք իբրև հրապարակախօսներ, գրականագէտներ իրենց հօր ընդգծած ուղիով համերաշխ գործել են վրաց թատրոնի և վրաց ու ռուսաց մամուլի մէջ։ Իշխան Գէորգի Միք. Թումանեանի ջանքերը են, որ կովկասում պիտի մտցնէր Զեմստւօ և հիմնուեց պօլիտեխնիկում։ Սրա ամուսինն է մեր շատ յայտնի հասարակական գործիչ իշխանուհի Մարիամ (ծնեալ Դօլուխանեան) Թումանեանը և սրանց որդիքը՝ երբ-տասարդ գործիչ (ժողովրդ. կուս. անդամ) Միքայել Թումանեանը, որ Տրապիզոն գնացած խաղաղութեան պատւիրակութեան անդամներից մէկն էր, որը քննադատական յօդուածներով աշխատակցում է և Տաուղին։ Եղբայրը՝ Իշխան Լևոն Թումանեան (սօցիալ յեղափոխական), ռուս. սահ. ժողովին ընտրուած պատգամաւոր և Անդրկովկ. սեյմի անդամ, որ հրաժարուեց ընդունել մինիստր. պօրտֆէյլ։

Իշխան Թումանեաններ սերուած են Մամիկոնեան տոհմից, տարբներ առաջ հայազն Նարիմանեան և Ջհանգիր-խան Մամիկոնեան էնիկոլօպոների (պարսկական նշանաւոր մինիստրներ Եւրոպայում) կենսագրութիւնների մէջ յատնաչոյց էինք արել Գարիլի ազգ. մատենադարանում մի ձեռագրի վրայ, որից երևում էր, որ յիշեալ նշանաւոր հայազն պետական դործիչները վարդան Մամիկոնեանի շառաւիղն են։ Իշխան Թումանեանները նոյն Մամիկոնեան տոհմիցն են, վկայած մեր պատմադիրներից, ի միջի այլ վաւերագիրների կայ և Եփրեմ կաթողիկոսի կոնդակը 1813 թ. տրուած իշխան Թումանեաններին, ուր նոյնպէս ասած է սրանց Մամիկոնեան շառաւիղ լինելը։ Այս տոհմիցը են վրաստանում և այն Թումանեան իշխանական տները, որոնք վրացացած են և ընդունած պրաւօսլաւակ. և կաթոլիկութիւն։

ՔԱՆՉԻՆԳԱՄԵԱԿ Հ. ԴԻՈՆԵՍԻՈՍ Վ. ԿԱԼԱՏՈՋԵԱՆԻ

Աշդի մեր օրերում երբ միտքն ու մտաւորը ասպարէզից հեռացրած են և իշխում են բռունցքն ու գընդակը, անշուշտ ամենամտ և առանց պաշտամունքի են մնում մեր մէջ և այն եզակի պայծառ դէմքերը, որոնց ներկայութիւնը գիտնական կառոյցներին իսկ պատիւ ու հրճուանք են լուսաւորը աշխարհներում։ Այդ փայլուն դէմքերից մէկն է մեր մէջ և Հ. Դիոնեսիոս Կալատոզեանը, որի քահանայական և գրակ.-հասարակական գործունէութեան քառհինգամեակը անցեալ ապրի Թիֆլիսի հայ-կաթոլիկների առաջնորդարանում կատարուեց նրկսեռ հայ և օտար ազգի ընտիր հասարակութեանը։

Հ. Դ. Կալատոզեանը ընիկ կովկասեցի, իր ուսման ընթացքն առացել է Վենետիկում, հ. Ղևոնդ Ալիշանի հայրենասէր ոգին ժառանգելով։

Իրքև փիլիսոփայ-աստուածաբան և լեզուագէտ



Հ. ԴԻՈՆԵՍԻՈՍ Վ. ԿԱԼԱՏՈՋԵԱՆ

1892 թ. Հռոմի այժմեան Պիոս Ե. պապի ներկայութեամբ առլով իր քննութիւնը, պսակւում է գիտնական քահանայի աստիճանով և ստանում է նրանից վկայագիր, որով արտում է Հ. Դիոնեսիոս Կալատոզեանին արտօնութիւն աշխարհիս բոլոր կաթոլիկ եկեղեցիներում քարոզելու։

Ուսման ընթացքն աւարտելուց յետոյ վեց տարի Վենետիկում Մխիթարեանների վարժարանում մաթեմատիկայի, խոալերէնի և ֆրանսերէնի ուսուցիչ է եղել, միաժամանակ Հ. Ղ. Ալիշանի Սիսւանի, Այրարատի և մեր մեծահատոր քերթուածների խմբագր. տպագր. գլխաւոր ղեկավարը։ Ապա Ս. Ղազարի նշանաւոր մատենադարանի տեսուչ, Հ. Ղ. Ալիշանի օգնական, վիճակաւորութեան նախագահ, Աբբահօր քարտուղարի օգնական և Բազմավէպի խմբագր. անդամ։

Տասնչորս տարի Վենետիկում ամբարելով գիտութիւն և գրական-հասարակ. գործիչին անհրաժեշտ փորձառութիւն ու համարձակութիւն, վերադառնում է հայրենի Անդրկովկասը։ Հաւաքում է հազուագիւտ գրչագիրներ, տպաւած տպագրութիւններ, հին դրամներ և ուղարկում Վենետիկ Ս. Ղազարի քանդարանին։ 1903 թ. Մխիթարեանների Ծրագիզոնում վարժարանի տնօրէն օգնականի պաշտօն վարելուց յետոյ, կատարում է հնագիտական հետազօտութիւններ և հետևեալ տարին Ղրեմի հայ-կաթոլիկ հաստատքի ժողովրդապետ է նշանակւում և Ղարասու-Բազարի դպրոցին տեսուչ։ 1903 թ. Թերապօլի Քեմ. առաջնորդ բարձն Ռօօպիի կարգադրութեամբ Անդրկովկասի հայ-կաթոլիկ. հոգ. կառավարութեան անդամ է հրաւիրւում։ 1908 թ. Սիմֆերօպոլ քաղաքի հայ-կաթ. ժողովրդապետի և գործակալի պաշտօնն է ստանում։ Իսկ հետևեալ տարին տեղափոխւում է Թիֆլիս, ստանձնում համայն Ռուսաստանի հայ-կաթոլիկ հոգ. կառավարութեան նախանդամի պաշտօնը։

Հ. Դիոնեսիոս հեղաբարոյ, իսկական տիպ գիտնականի, լրջօրէն պարապում է և գրականութեամբ։ Տիրապետելով շատ լեզուների և քաջ ուսումնասիրած լինելով ընդհանուր պատմութիւնը, կազմել էր հայոց և վրաց պատմութիւն, ոչ ըստ հայոց և վրաց պատմագիրներն ունենալով իր նիւթերի աղբիւր։ Սակայն 1906 թ. դարձեալ անտարխիայի օրերին Օղուրգետ քաղաքն հրդեհելով, այրւում է և Հ. Դ. Կալատոզեանի մատենադարանը, բայց այդ հանդամանքը չէ յուսահատեցնում լուրջ բանասէրին. այլ նա նորից ձեռնարկել է իր աշխատութիւնները կազմելուն։ Յաբելեար հ. Դիոնեսիոսը պաշտօններ է վարել Հայոց Ազգագր. Ընկ., Վրաց Պատմ. Ազգագր. և Գրագիտ. Տարածող Ընկ. խմբագր. յանձնաժողովներում, մասնակցում է հնագիտ. արշաւանքների և ազգ.-հասար. իր գործունէութեամբ շատ սիրելի է մեզ ամենքիս։ Իր յոբելեանի առիթով հ. Դիոնեսիոսը օրհնութեան կոնդակ էր ստացել Հռոմի պապից, Վենետիկի Մխիթարեան աբբահօրից, շնորհաւորականներ բարձն Ռօօպից, Սարատովի եպիսկոպոս Կեսլերից, Ռուսաստանի և արտասահմանի հայ-կաթոլ. շատ համայքներից ևն. ևն.։

Գրական-Գեղագիտական Սալօնը իր հերթական երեկոյթներից մէկը որոշել էր յատկացնել բազմերախտ մեր Վենետիկի կաճառի յոբելեար սանին և այդ պատճառով այս յոբելեանի յիշատակելը Տարազի մէջ պահել էինք, որ հանդէպից յետոյ տպագրէինք։ Սակայն, մեր դժոխք արդի օրերում ժամանակաւորապէս ընդհատած լինելով Գր.-Գեղ. Սալօնի հերթական երեկոյթները, անյարմար գտանք յետաձգել յօդուածի տպագրութիւնը։

Ցարգանք և արտագին մեր շնորհաւորութիւնները Ս. Ղազարի կառաւրն և նրա արժանաւորագոյն սան Յոբելեար հ. Դիոնեսիոս Կալատոզեանին։

—

Սգաւելով առիթից տպագրում ենք պատմական ներկայ պատկերը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչու հետ Հռոմի ս. Սիլվեստր I պապի գրկախառնուելը և այն աղօթքը Լուսաւորչին, որ տօնելով նրան երգւում է Հռոմի եկեղեցիներում։ Այս պատկերը կանգնեցրած է Հռոմի Լևոնեան հյ. կաթոլ. վարժարանի եկեղեցւոյ աւագ խորանին։ Իսկ այս աղօթքը տպագրած է լատիներէն և ֆրանսերէն պատկերի յետև, որ 1914 թ. յունիսին Բրիւսէլում, համաշխարհային այս ահռելի պատերազմը սկսելուց ուղիղ երկու շաբաթ առաջ, առացանք նէր Armena-ից, նրա մեր պատւին Բրիւսէլում կազմած մի հաւաքոյթին, ուր ներկայ էին ի միջի այլոց և կաթոլիկ եկեղեցու Բրիւսէլի յայտնի հոգևորական պրոֆեսոր Մ.։

Եւ ով կարող էր ենթադրել, թէ այն տաճարները, որ հետևեալ օրը մենք այցելեցինք Բրիւսէլում և նրա շրջակայքում, կիսաւեր պիտի լինեն այն թշուառ Հայաստանի նման, որի վերածնութեան համար այնքան, այնքան, արտագին ճիգեր էին և բարեկամ Բելգիացիք։

Ս. Դրիգոր Լուսաւորչու հետ Հռոմի ս. Պիտեռ Պապի գրկախառնուելը։

Աղօթք սո. սուրբ Դրիգոր Լուսաւորիչն։

Ով երջանիկ սուրբ Դրիգոր, որ Բարձրեալի առաւնիին շնորհիւը կոչնդով առաքելական պաշտօնի՝ յուսաւորեցիր հայասանը, հոգեպես վերածնելով այն, եւ մեր հաւատի Հայրն եղար եւ յիրկնուս ընտրեալ վարդապետը, աղաչում ենք քեզ, կրածդ բոլոր չարչարանքով, պահպանիդ մեզ՝ յաւեւ սեղմ միացած հաւատի անկիւնահան վիմին, ըստ օրինակի ֆո սեղմեալ եւ երկաթներում պրկեալ ճիւրականաց ոսկերին, որոնցից աստատրեն ժայթքից ֆո անգին արիւնը։

Ո՛վ վերերջանիկ սուրբ Դրիգոր, որ վերստին յաւգար աղօթքով յարիչտակուած յիշեցուդ պահուն, աստուածային սիրովը փոխակերպուած եւ յուսով զօրացած, աղաչում ենք քեզ վեր առաջնորդել մեզ երկնային խորանները, ուսից, հեռացրի՛ մեզ մեր մեղքերը՝ գահավէժ անելով մեզ եղկութեան եւ թշուառութեան անդունդը։

Ո՛վ սիրով ծոյռեալ Հայր, պաղատում ենք քեզ մեզ, ֆո հոգեւոր զաւակներդ, մեղքերի ծանրութեան տակ ճնշուածներս, բարեխօս լինել մեզ համար երկնաւոր Տէր մեծ՝ որ ևս պարգեւէ մեզ մեր մահկանացու կեանքը ուղղափառ հաւատի դաւանութեան մէջ կնքելու շնորհը։—

Թարգմանեց յատկապէս Տարազի համար
Ա. Մ. Պ. Զէկեան (անտիպ ձեռագրից)

ՋՆՈՒԴ ՅՈՒՐ ԻՆՁ

Իսրայէլի աճպա՛նս գաւակ,
Հալածակա՛ն դու բօտա՛ռ.
Ինո վիճակն էլ մեռի նման
Դառնագին է ու դժուար։

Դու դարերով բիւր ցաւերոյ,
Տառապել ես անդադար,
Սրհամարել, ոճնահարել,
Տանջանք կրել անհամար։

Դու էլ մեզ պէս վիրաւոր ես,
Աճօգնական, վօտաբե՛կ.
Ջեռիդ տա՛ր ինձ, եղբայր դառնանք
Մեր բոլորի ցաւն է մէկ։

Ե՛կ միանանք, միմիանց սիրտ տանք,
Պահանք իրար մեր ցաւը
Փարթերի դէմ կռիւ մղենք,
Ու ազատենք մեր ցաւը..

Ցառուքիւն Թումանեան

ՔԱՌԱՍՈՒՆԱՄԵԱԿ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Այս տարի յայիսի 1-ին (հ. տ.) լրացաւ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանի բժշկական գործունէութեան քառասնամեակը։ Թող Նախախնամութիւնը գթայ հայրենասէր մեծ գործչին և պարգեւէ կեանք, իր ստեղծած, նախանձած, խոստացած հայրենիքը տեսնել գէթ իր յիսնամեակին խաղաղ ու անդորր։ Հասարակական այլևայլ շրջաններից բազմաթիւ էր յայտնուել այդ քառասնամեակի առիթով հրապարակային յարգանք մատուցանել Ց օբելեան բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանին, սակայն նա բացէ ի բաց հրաժարուել էր ընդունել հրապարակային որևէ յոյժ։

Ուստի մենք էլ քողնում ենք աւելի պատեհ օրերին մատուցանելու հրապարակային հանդիսաւոր յարգանք և կատարել պատշաճ տօնախմբութիւն մեծ հայրենասէրին և մեր մտերիմ աշխատակցին։



ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Բժշկական գործունէութեան 40-ամեակի առիթով։

Ա Կ Ե Ր Ի

Ծաղկեպան, մի՛ փունջ կապի՛ր,
Երանգ-երանգ ըիւրալի,
Որ էակին գերընտիր,
Ի՛սկ ներդաշնակ այն լինի։

Իւր պերճ ոսկի մազերին,
Ծաւի, անուշ աչերին,
Զքնաղ կերտած գեղ մարմնին,
Մաքուր հոգուն, վառ սէրին։

Ծվարդ.



ԻՆՁ ՄՈՌԱՑԻՐ

Մոռացիր ինձ. մոռացիր, մոռացիր իմ անունը.
Ցաւդ անցիր, սէր չունիմ ես էլ իմ սրտում,
Ցոգնատանջ հոգիս վաղուց է ազատ,
Սէրս այլևս չի կարող ստրկել։

***

Մոռացիր. մի յիշիր դու օրերն անցեալ,
Օրերն ուրախ ու երջանկութեան,
Մի յիշիր ժպիտ դու ուրախութեան,
Նանդավառ օրերիդ առնչանք ու գոյոյթ,

Ս. Զիրեճի

Վեհեթիի. Մխիթարեան Ուխտի Կաթողիկէ գլխաւոր տաճարը.

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՐԲԵՄՆ ՕՐԻՈՐԴ ՅՈՒՍԻԿԵԱՆԻՆ

Դախչի ասող
Բօխանուհի Ե. Լ. Ջանջիէէի
Տես Տարազ 1917 թ. № 9

Ըսլասում ես նամակների և չես ստանում։ Նոյնը և ես։ Պատճառը՝ որովհետև յեղափոխութիւն է, հինը կործանւում է, իսկ նորը կառուցանողները դեռ միմեանց հետ կուռում են, իշխանութիւնները իրենց են պահում։ Ժողովրդին ըսպասաւորել չեն կամենում, այլ նըրան հրամաններ են տալիս, աւելի խճճում, բարդում կեանքը։ Ի՞նչպէս նամակ սուտաս, երբ պօստում ուղարկածդ դրամը իւրացնում են, իսկ նամակդ էլ ցենզօրները են ոչնչացնում։ Կատակ չը համարես, բարեկամ, ցենզօրները մինչև օրս էլ գոյութիւն ունեն և պօստով ստացող ու ուղարկող բոլոր նամակները էլ նախ ցենզօրները կարդում են, ապա տան ամսից յետոյ ուղարկում, կամ ոչնչացնում։ Սով է ամեն ինչի, նամակը չեղած թանգութիւն Թիֆլիսում։ Հայի ֆունտը 50 կ. բայց տրում է մարդագլուխ օրական կէս ֆունտից աւելի պակաս. այդ ստանալու համար գիշերւայ ժամը 3-ից պէտք է գնաս հերթի կանգնես, որ ստանաս։ Իսկ եթէ այդ չես կարող, վճարիր թեխ, դարման դարձած հացի ֆունտին 3 ր., իսկ ճերմակ հացին 4, 5 ր., հաւի մէկը 20-30 ր., մսի ֆունտը 3-5 ր., պանիրը 5-6 ր., չայի ֆունտը 30-50 ր., շաքարի ֆունտը 6-10 ր., կրկնակօշիկը 50-70 ր., կօշիկը 300-500 ր. և այսպէս ամեն ինչ։ Շատ արժան է մէյն մարդ՝ հազիւ 5 ր. այսինքն մի գնդակ և անվերջ ալանթալան ու մարդասպանութիւններ կազմակերպել են Թիֆ. Քաղ. Վարչ., Ֆինֆ. պիտ. Թատրոնի մեհատիայ չեյբուղ դրամարկղները, Թիֆլիսի կենդրոնում պալատի դիմաց, Սևերնի մեծ հիւրանոցը և անթիւ աներ, խանութներ ու տարել շատ տասնեակ և հարիւր հազարների գու-



Աճիի Մայր Եկեղեցին
վերտին անցաւ տաճիկներին։

մարներ, ակնեղէն, ոսկեղէն, տոկոսաբեր թղթեր, ոսկի ևն ևն։ Բայց բանականացիր այսքանով կեանքի մասին։ Այժմ հաղորդեմ լաւ լուրեր։ Թիֆլիսում բացուել է վրաց համալսարան։ Հանդիսաւոր բացման պատրաստ մատոյց վրացիների նորընտիր կաթողիկոսը նոյն համալսարանի եկեղեցում, ապա մաղթանք և յետոյ միայն խօսեց համալսարանի վերատեսուչն ու ուրիշները։ Հայոց Ազգային Խորհրդի և հայոց ազգի կողմից պերճ ու խանդաղատալից ճառով ողջունեց Հ. Ազգ. Խորհրդի նախագահ պ. Ա. Ահարոնեանը։ Շատ շքեղ խօսեց կանոնց կուրսե-



Լեւոն Մարգանեան
Տաճիկները գրաւելով Ալէքսանդրօպօլը, քաղաքացիներից ընտրեց իրենց ներկայացուցիչ, որև հաստատեց տաճկ. նոր կառավարութիւնից, ինչպէս քաղաքագլուխ

րի կողմից մեր հեռաւոր տիկին Աննա Մելքիսեդեկեան։ Նշանակալից ու օրինակելի է վրացիների արդի գործելակերպը։ Ձևանում են արմատականներ, սոցիալիստներ, իսկ գործում ինչպէս ղուտ ազգայնականներ։ Եւ որքան լաւ կանէին, եթէ այդ ձևականը իսպառ շպրտէին և ամենայն անկեղծութեամբ դաստիարակէին իրենց ժողովրդին ղուտ



Ալ Խասխասով
Հայկակ. կառավար. կ. Պոլիս գնացած պատգամաւորութեան նախագահ։

ազգայնական ոգով։

Եւ մինչդեռ վրացիները ջերմ հոգով աղօթով իրանց ազգային եկեղեցում աղօթելով ու կաթողիկոսի օրհնութեամբ էին բանում իրենց ազգային համալսարանը, իմ միտքս սկսել էր չջմփածին, ուր տպէտ հայ աշակերտները փակել էին Գէորգեան ճեմարանի դռները և հրաժարել 1600-ամեայ հայ լուսաւորութեան կրթող պատմական ս. Իջման տաճարում լրգելու և աղօթելու...

Վերջնականապէս Անդրկովկասը յայտարարուեց անկախ հանրապետութիւն։ Սէյմը կազմակերպուած է արդէն և ընտրուած, հաստատուած են մինիստրները, որոնք արդէն ստանձնել են իրանց պօրտֆէյլները։ Անկախ սրանից, կազմուած են Ազգային Խորհուրդներ՝ Հայկական, Վրացական, Մուսուլմանական, Ռուսական ևն. ևն. հէնց այնքան, որքան ազգութիւններ կան Անդրկովկասում։ Եւ սրանցից զատ, սունկի պէս բուսել են անթիւ ու անհամար հայրենակցական միութիւններ, իսկ եթէ սրանց վրայ էլ աւելացնես անային, թաղային ևն. ևն. -ային կոմիտէներն ու կուսակցութիւնները, կը տեսնես որ համայն Անդրկ. վիճակը շատ նուրբ ցանցերով շաղկապած է, նման շըւեցարական կանտօնների հրկաթուղիների ցանցերին ու իմպերիներին։ Զանազանութիւնը՝ որ Անդրկովկասի Ազգ. Խորհուրդները, կոմիտէներն ու կուսակցութիւնները տարած են իրենց վստահացած ժողովրդների վրայ, կարծես, կառուցանելու Անդրկովկասեան հանրապետութիւնը, անհնթեթ, մէկը միւսին հակասող ու կեղծ գործակցելով։



ՍԵՆԵՔԵՐԻՄ ԱՐԾՐՈՒՆԻ

Իրաւաբ տնական գործունէութեան 50 ամեայ յոբելեանի առիթով

Զը նայած անձի, դոյքի, խըղճի և խօսքի ազատութեան, այնուամենայնիւ հրէք մարդկային կեանքը, դոյքը, ազատ խօսքը այնպէս չէ բռնաբարւել, ինչպէս այժմ Լրագրները դատարեցնւում են, տըպարաններն ու խմբագրատներն կնքւում, կոյս աղջիկներին գնդակահարում, որովհետև նրանք մերժում են իրենց ձեռքը խնդրողների հետ ամուսնանալու։

Կրօնի դասաւանդութիւնը քաղաքդպրոցներում վերացւել է։

Նոր 1, 3, 5, 10, 50, 100 և 250 րուբլիանոց թղթադրամներ է կտրել Անդրկովկասեան նոր կառավարութիւնը, որի վրայ տպւած են երիք լեզուներով՝ հայերէն, մէջտեղը վրացերէն և ապա թիւրքերէն։

Բացւում են նոր-նոր սրճարաններ և սեղանատներ մէկը միւսից չքեղ։

Տրամւայի գինը բարձրացրած է տասն անգամ. առաջ Երևանեան հրապարակից մինչև երկաթ. կայար. 5 կոպէկ էր, իսկ այժմ 50 կ. Երևանեան հրապարակից մինչև վաքանցովի արձանը առաջ 3 կ., էր, իսկ այժմ 30 կ։

Շատ հարստացել են դէպղայինները. գրպանները լիքը են հազարներով, թշւառ. ու կիսաբաղց է մատւորականը։ Թատրոնները, սինեմատոգրաֆները, թէյարանները, սրճարանները լիքը են միշտ ժողովրդներով, որոնց մեծագոյն մասը սոլդատի արաներ հագած, որոնք ցնծկները փողոցներում ամեն տեսակ ապրանք են վաճառում։

Մայիսի մէկից Անդրկովկասեան կառավարութիւնը մտցրեց արևմտեան (Գրիգորեան) օրացոյցը, որ հին տոմարից 13 օր առաջ է։ Բարի ճանապարհ հնին և թող նորը բերէ իսկական առաջադիմութիւնը, համերաշխ գիտակցութիւնը։ Երանի քաշն էլ՝ պուդը, ֆունտը, չափը, արշինը, վերշոկը, գրամը, րուբլին, կոպէկը վերածւէը եւրոպականի՝ կիլօ, մետր, ֆրանկի կամ մարկի։ Մեր րուբլին շատ խոշոր չափ է, որ տարաբախտաբար այնքան նըուհմայրւից ու ստորացրւեց։

Անդրկովկասեան սէյմն արդէն հողային հարցը՝ կալւածատէրերից խլել և գիւղացիներին բաժանել, որոշւել է և սկսել է դործադրութիւնը։ Սակայն անարդար է տանից կալւածատէրերին վարձատրելու, ձրիաբար հողը բաժանել գիւղացիներին։ Եթէ այդպէս է, պէտք է խթանալով հորիզոնի վրայ, սև ամբեր դարձած, հրատապ պայթեց և վերնտին վերադարձաւ իրրև մալիսեան յորդառատ, կենսաբար անձրև ու աւնկի նման մէկը միւսի հետևից գլուխները բարձրացրին Հրատական, Ադրբէջանեան և Արարատեան անկախ երեք հանրապետութիւններ։ Կեցցեն երեք հանրապետութիւնները, կեցցէ և Գերմանեան։ Ադրբէջանի մայրաքաղաքը Գանձակն է որոշւած, որն արդէն բռնւած են տաճկական զօրքերով, Էնւէը փաշայի եղբայր Նազմ փաշայի գլխաւորութեամբ։ Վրաստանի մայրաքաղաքը Թիֆլիսն է, իսկ Արարատեանինը Երևանը, ուր տեղափոխւում է և Հայոց Ազգային Խորհուրդը։ Երևի հայերը կունենան մի քանի հանրապետութիւն՝ Արարատեան, Վասպուրական, Սիւնիք են. են.։ Յամենայն դէպս ցանկանք համաշխարհային պատերազմը փութով վերջանայ, Գերմանիան ու Անգլիան անկեղծօրէն հաշտւին, իրենց մէջ բաժանեն աղդեցութիւնների սահմանները և տիեզերքին բերեն խաղաղութիւն։

Մեր ձեռից անցան Անին, Ախալցխան, Ախալքալաքը, Ալեքսանդրօպօլը, Ղարսը, Բաթումը և ամբողջ տաճկա-Հայաստանը՝ Վան, Էրզրում, են. են։ Ահա քեզ ազգերի ինքնաորոշումը։

Դաղստանը միանում է տաճկաստանին, ինչպէս և բողբոջ Ադրբէջանեան հանրապետութիւնը։

ԲԱՌԱՄԷՍ

Ի. ՇԵՐԵՇԵՎԻ

Նախկին մինիստր և պարագլուխ մենշեվիկհանների, որ և յայտարարեց, Անդրկովկասի սէյմը լուծելուց, Վրաստանի անկախ հանրապետութիւնը և ընդունեց վրաց ազդային ժողովից։

ԱՐՄԱՑԻՍ ԵՐԶՆԿԵԱՆ

Նախկին մինիստր Անդրկովկասեան հանրապետութեան, պարագլուխ մենշեվիկհանների խմբագիր Պայքար լրագրի և Տարագի հաւատրց աշխատակից։

ՕԿՐԱՅԻՆԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՆ

Ռուսաստանում, կովկասին հարևան կրած մի անկյունն է Ուկրայինան, որ այժմ բաժանելով Ռուսաստանից, կազմել Ուկրայինան Հանրապետությունը, հաշտությունն կապել Դերմանիայի հետ առատրական զրույցների օգնությամբ մի քանի քազաքներ էլ իրան մի ացելով, Սղէանն էլ որոշել էր յայտարարել իր հանրապետության մայրաքաղաք Նորերս լրացաւ և Ուկրայինայի պայծառ գաւակ Տարաս Սևչենկօի ծննդեան հարիւրամեակը։ «Տարազ»-ի մշակական ընթերցողներն անշուշտ յիշում են, որ դեռ սրանից հօթ տարի առաջ, 1911 թ. Նևչենկօի մահուան 50-ամեակի առիթով մենք տպագրեցինք Ուկրայինայի ազատութեան այդ երդչի կենսագրութիւնը և նրա տեսիլքները։ Այսօր նորից առիթ է ներկայանում խօսել Ուկրայինայի և նրա արժանաւորագոյն գաւակի մասին։

Ուկրայինան ունեցել է պատմական անցեալ և վերջին 18-րդ. դարում կէսից նուլուս, արհամարհած, ճնշած լինելով, ընկած էր խոր քնի մէջ։

Ճիշտ է, այդ ժամանակաւոր քունը տևել է երկար, նոյն իսկ դար և կէս, բայց և այնպէս նա անցել է—ինչպէս, Ուկրայինան,—զարմանում էին շատերը, այդ քնչ Ուկրայինա է...

Սակայն, այդ արհամարհած Ուկրայինան իր ծոցում ունի 15 միլիոն կենսունակ ազգաբնակութիւն և դրա գարաւոր նիրհի պատճառն եղել են, ինչպէս և ամեն տեղ, ամենից առաջ հէնց այդ երկրի «պայծառափայլ պահերը»։ Այդ պահերը նոյնն էին, ինչոր ամեն մի ֆէօդալ և դրանք էին, որ մեր ջոջերի նման նոյնպէս առում էին իրանց ժողովրդական լեզուն, համարելով նրան «տեսիկ» լեզու։

Իսկ քանի ժողովուրդը։

Նա անքօս էր, նա կաշկանդած էր, նա ճորտ էր, իսկ այդպիսի պայմաններում, ի հարկ է, չէր կարող երևան գալ և իր կենսունակութիւնը ցոյց տալ։

Ահա թէ ինչ էր Ուկրայինան Ռուսաստանի ճորտերի ազատման նախօրեակին։ Եւ ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս էլ այստեղ անցեալ դարի սկզբներում, սքափման նշոյլներ է ցոյց է տալիս նաև Ուկրայինան։ Այդ ժամանակներում էլ երևան են գալիս այդ կենսունակ ազգի ներկայացուցիչ—կարապետները, նրա արժանաւոր աղաներն և դոչ անում աշխարհի առաջ, թէ մալօրօս ժողովուրդը եթէ քնած է, սա դեռ չի նշանակում, որ մեռած է, եթէ նրա լեզուն չի դուր գալի նոյն ազգի ծոցում մակարուծօրէն ապրող վնիին շերտերին, նա այնուամենայնիւ դրկուած չէ [illegible] մտքերը և առատող քոչչ[illegible] Այդ մտքի ներկայացուցիչն է Ուկրայինան պոռմէթէոսը՝ Տարաս Շեվչենկօն։

ՏԱՐԱՍ ՇԵՒՉԵՆԿՕ

Այդ անունը հայ ընթերցողի սրտին ոչինչ չի ասում, սակայն նա այն մարդն է, որ համարում է իր հոգևոր [illegible] պարծանքը, նրա մարգարէն, [illegible] և ոչ մի քանաստեղծ չի կարող [illegible] նրա անունը ոչ միայն իր հայ[illegible] քնամբ, այլ և ամբողջ աշ[illegible] ա[illegible] սլաւ ցեղերը։

Շեւչենկօն ուժեղ թափով լարեց ժողովրդի սրբոտերը հայրենասիրական կրակով։ Արհամարհած, գռեհիկ լեզուով հիւսեց այնպիսի չքնաղ երգեր, որից ազդեց նոյն իսկ ինտելիգենցիան, նա յիշեցրեց ժողովրդի ծանր վիճակը, հայրենիքի ընկճած դրութիւնը, անցեալ փառքը, ոգեց, սամանաւանդ, խաւարի մէջ քաղցած գռեհիկ խաւերի կացութիւնը։ Եւ նոյն իսկ այն ժամանակ, երբ հեռու աքսորուած էր, չընայելով որ այդ աքսորը նրան հիւծեց բռւականին, այն տեղ ևս նա չը դադարեց։ Այստեղ, խուզարկու աչքերից ծածուկ, նա երգում էր... և նրա երգն էր ոչ միայն հայրենիքի վիշտը, այլ բոլոր ազգերի հղեայրացումը... Երգում էր խիստ յուզիչ, խիստ զգալի, երգում էր ազի ալցունքներով... Նա ցոյց տուե ամբողջ աշխարհին, որ արհամարհած լեզուով ևս լինում է շնչտել ընդհանուր համամարդկային ցաւերը և այդպիսով 15 միլիոն ժողովուրդ ոգևորել։

Եւ հասկանալի է, եթէ ցաւը կայ, ուրախութիւն էլ կայ, նաև արտայայտութեան ձևը պիտի գոյութիւն ունենայ։ Հարկաւոր է միայն արտայայտողը երևան գայ, և եթէ կենսունակ է ազգը, նա վաղ թէ ուշ առաջ կը մղէ իր վշտի թարգմանին։

Եւ Ուկրայինան առաջ ժղեց Շեւչենկօին։

Եւ ոչոք այնպէս ուժգին չի երգում ժողովրդի ցաւը, որքան ժողովրդի ծոցիցը ելած բանաստեղծը։ Գէտ է ասկայն, սակայն, սակայն այն ժամանակները շնորհիւ այն հանգամանքի, որ ռուսաց շատ գրողները արիստական տոհմից էին և նրանց դաստիարակութիւնները, մասամբ ևս տրուած էին բարոյաբանական և կրօնական քնոյթով, ուստի ազատ չէր այդ հովերից նաև Շեւչենկօն։

Դիւզացին համարում էր կրտսեր եղբայր, ուստի և դէպի դիւզացին Շեւչենկօի վերաբերմունք, և ահա Շեւչենկօն, դիւզացու այդ հարազատ գաւակը, ճորտը հաշտւում է այդ ժամանակւայ տիրող հովերի հետ։ Նա երգում է.

„Обніміте, брати мої
Найменьшого брата;
Нехай мати усміхнеться,
Заплакана маті!"

Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Շեւչենկօն թէև կրթւում է վարշաւայում լինական լեզուի և դրական[illegible] ազդեցութեան տակ, բայց նրա տպաւորիչ դարդացողութեան դլխաւոր տարիները անցել են Պետերբուրգ Ժուկովսկու և Նիկարիչ Բրիւլովի ազդեցութեան տակ։ Դրանք էին, որ առաջին անգամ նկատեցին Շեւչենկօի տաղանդը, առողջ դաստիարակութիւնը, նրա կարշութեան չնորհը, լեզուի ճկունութիւնը։ Սրանք էլ 1838 թ. յայտագրին գնել Շեւչենկօ-ճորտին 2500 ր. և տուին կայսերական արուեստագիտական հանդամանք։ Ձեռք բերելով ազատութիւնը, Շեւչենկօն մնում է Պետերբուրգում, պատւում, լիւում է այն ժամանակւայ կրթական շրջաններում, աշխատում է համարձակում,



Բագու. Սպիտակ-քաղաք

Բոլշևիկների և տեղական թիւրքերի միջև արիւնահեղ ընդհարման ժամանակ ամբակոծուած և հրդեհուած։

ախուռ է հաճալսարանը և գրում է...

Զը պէտք է սակայն ժխտել, որ երբեմն-երբեմն, ծայրահեղ յուսահատութեան մէջ Շեւչենկոն կատակածանքով էր վերաբերում քէ դէպի հողատէր-պօմէշչիկների եղբայրական վերաբերմունքը, և քէ նոյն իսկ Աստուծոյ արդարադատութիւնը Այղպիսի բոլշևիկների տրամադրութիւնը լաւ բնորոշում է հետևեալ քառեակը.

„А може і сам на иебеси
Сміешся багечку над нами,
Та, може, радишся съ панами
Як править миром?“...

Դառն մտորումներն, ի հարկէ, ունէին հիմնաւոր պատճառ։ Ճորտերի դրութիւնն անտանելի էր. ինքն էլ ճորտ լինելով, Շեւչենկոն կամենում էր վառել սըրտերը, ձգտում էր ճորտերին բարձրացնել մարդկային արժանաւորութեան պատուանդանին, բայց դանկալի ազատութիւնը տեղի չէր ունենում...

Նա իր հայրենիքում երկար չհրգեց։ Կիևում կար Կիրիլլո-Մէֆոդիական մխարանութիւն, որի նպատակն էր արծարծել ժողովրդի մէջ կուլտուրական և բարոյադիտական սկզբունքներ։ Շեւչենկոն մի քանի բանաստեղծութիւններ է գրում այն ուղղութեամբ։ ժամանակի համար դրանք համարւում են դատապարտելի։ Շեւչենկոն ուղարկւում է աքսոր, ուր մնում է 1847 մինչև 1857 թ.։ Ահա աքսորում տասը տարի կրեց նա շատ ծանր կեանք։ Առաջ նա աքսորւեց Օրսկի բերդը (Օրենբուրգի նահանգ), ապա Նովո-Պետրովսկ (Անդրկասպեան երկրում)։ Այդ գաւառները մանաւանդ այն ժամանակները յայտնի էին իբրև յետամնաց վայրեր, և Շեւչենկոն շատ ծանր օրեր է քաշել կիսավայրենի ղրղզների, ընիկների մէջ։ Եթէ քիչ մխիթարական օրեր նա տեսել է, այդ էլ հայերի շնորհում։

Մեզ պատահել է լսել Մանգըշլաղի հայերից Շեւչենկոի մասին։ Հայերը շատ սիրով են վերաբերւելիս եղել բանաստեղծին և գովեստով էին խօսում նրա մասին։

Ներում ստանալուց յետոյ, Շեւչենկոն միայն 3 տարի է ապրում և մեռնում է Պետերբուրգում։ Նա ժեռաւ ճորտերի ազատութեան հրովարտակը յայտարարելուց մի քանի օր յետոյ, այն է՝ 20-ին փետրուարի 1861 թ., 47 տարեկան հասակում (ծնւել է նա 9 փետրուարի 1814 թ.)։

Հայրենակիցները Շեւչենկոի կտակի համաձայն փոխադրեցին իրանց սիրելի բանաստեղծի մարմինը Ուկրաինա և հողին յանձնեցին Կանևա քաղաքի մօտ։ Իր մասին Շեւչենկոն գրել է հետևեալ սիրուն կտակը.

Як умру, то поховайте
Меня на могілі,
Серед степу широкого
На Вкраіні милій:
Щоб лані широкополі
И Дніпро, і кручі
Було видно —було чути'
Як реве ревучий!..,
. . . . . .
И менс в семьи великій,
В семьи вольній новій
Не забудьте помянути
Не злім тихім словом!...

Շեւչենկոի գրուածքները թարգմանւած են բոլոր սլաւոնների լեզուներով, նաև ռուերէն։ Աշխատութիւնների մէջ յայտնի է «Կօբզար» բանաստեղծութիւնների ժողովածուն, որի մէջ կան շատ սիրուն կտորներ «Հայդամակի», «Ճօպօլեա», պատմական պօէմներ, բալլադներ... Դրանք արժանացել են այնպիսի ուշադրութեան, որ «Կօբզարի» հեղինակը դարձել է երկրպագութեան առարկայ։ Վերջին տարիների գրուածքների մէջ յայտնի են՝ «Կազկազը և Զապօվիդա»։

Յայտնի է նոյնպէս «Ներօճ» բանաստեղծութիւնը։ Շեւչենկոն արդար ցասումով ծաւանում է բռնակալ Նիքօնի վրայ. երեսովն է տալիս նրա բարբարոսութիւնները, անմեղների թափած արեան համար բանաստեղծը ապատնում է, ասելով՝ տանջւածների հոգիները կը դատեն նրան, սրանց հոգիները կը գան, կիջնեն բռնակալի բարձի առաջ... և բանաստեղծը որոշում է այսպէս՝ այդ հոգիները կը ներեն բռնակալին։

Այլ կերպ չէր էլ կարող եղրակացնել բանաստեղծը, քանի որ նրա հոգին վեհ է, սիրտը բարձր ամեն մի վրէժից և չարախնդութիւնից։

Ե. Սոլովեաճ.

ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ԲԻՄԱՐԿ
(Սեւերանկար)

Հանճարեղ դիւանագէտ Բիսմարկն ասում էր՝ ազգերըն էլ երկու սեռի են լինում արական և իգական. նա համարում էր գերմաններին արական, իսկ սլաւոններին իգական, սրանք պիտի կրաւորական դերի մէջ ենթարկէին առաջինների ներգործական տիրողութեան, կուլտուրային և մանաւանդ սահմանել լինէին նրա հետ։ Արդէն հին դարերում շատ երկիրներ և միլիոնաւոր սլաւեաններ գերմանացան, վկայ են բազմաթիւ գիւղերի և քաղաքների անունները։ Գերմանիայի արագ ազգեցութիւնը Ռուսիայի վրայ՝ անհուն է, հիմա էլ Գերմանիայի ցանցն ընկած

ԱՋԱՑԻՆԵՐ

Իրանց ախտանիշ վրայներին դաւաճանելով, տաճիկների կողմն անցան։

Չերնոգորիան, Սերբիան, Բոլգարիան, Բոսնիան, Հերցեգովինան, Չէխիան, Պոլիսյան, Լեհաստանը են...։

Շատ տարիներ առաջ գերմանական դիւանագիտութիւնն ասել է, որ Ռուսիան պրաէ Հայաստանը, մենք էլ կը պրաենք Լեհաստանը։ Ռուսական դիւանագիտութիւնը ասել էր, մեզ Հայաստանը պէտք է առանց հայերի. տաճկական դիւանագիտութիւնը ներդաշնակելու համար յայտնել էր, մենք Հայաստանը պիտի տանք Ռուսաստանին առանց հայերի։

Եկաւ Զորորդ կաթողիկոսը համոզած Թուրքահիլ էր, նա հաստատուած էր, որ Տաճկաստան միայն կարելի է հայ ազգը պահպանել, այնտեղ է Հայաստանը, հայրենի արձանները, ազգի մեծամասնութիւնը և բաւական չափով ազգային ներքին ինքնավարութիւն։ Նա քարոզում էր տաճիկի հետ քաղցր և հաւատարիմ վարուել, չը հաւատալով եւրոպական դիպլոմատիային։ Նա ասում էր, հայերը նախ պիտի բարոյապէս վերածնուին, ապա թէ մտածին հայկազանց ազգ վերականգնին. նա բոլորովին ի սրտէ էվոլիւցիայի կողմն էր և խստաւ հակառակ revolիւցիայի։ Մակար կաթողիկոսը իւր անպրանիկ կոնդակում օրհնեց ռուսաց կայսրին, տաճկաց սուլթանին և պարսից շահին։

Սակայն այդ սուրբ հայրապետների ճիգերը ինչ

ՍՈՒԼԹԱՆ ԱԻԴԻԼ-ՀԱՄԻԴ
1918 թ. յունուարին վախճանուց Թուրքի բռլորոգեմով

կարող էին արևելեան հարցով շանապրդուած երկու գլխաւոր անխիղճ ինտրիգների դէմ, որոնք տպէտ, տհաս հայ ժողովրդին իբրեւց գործիք արին և սպանեցին։

Անգլիան արդէն խոստովանեց իւր մեղքը, բայց ինչ օգուտ։ Իսկ Ռուսիան...

Ռուսիան արդէն լուրջ քաւում է իր ոճրագործ քաղաքականութեան դառն պտուղները։ Եւ Թող աշխարհը վերջապէս համոզուի, որ ոչոք, լինի նա անհատ, թէ պետութիւն, չի կարող յաւիտեան կատուացանել իր շէնքերը, պահպանել իր գոյութիւնը, շարունակ անմեղի արիւն ծծելով, անպատասխանին իր ճիրաններում սեղմելով։ Բնութեան մէջ կայ արդարութեան յաղթանակ։ Եւ այսօր Անգլիայի ու Ռուսիայի քթածակերից է հանում արդարադատ Աստուածը թշուառ հայի և նրա նըժանների վրէժը։

Եւ Թող եւրոպ. հզօր ախոյեաններ՝ Անգլիա ու Ինվժանիա վերջապէս խոնարհին արդարադատ Բնութեան յաւիտենական ճշմարտութեան առաջ, ու վերջ տան պատերազմին, երկու կողմն էլ ասելով, այո՛ չը յաղթեցինք, այլ մարդկութիւնը բնաջինջ արինք, աշխարհը կործանեցինք։

Ն.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՏՈՒԹԻՒՆ

Վ. ԱԲԱՇԻՃԵԱՆ 40 ԱՄԵԱԿ ԾՕՐԵԼԵԱՆԸ

Ապրիլի 16-ին, կիրակի, վրաց ակումբի թատրոնում հանդիսաւորապէս յոբելեանց վրաց Թատրոնի ռահվիրայ քանքարաւոր դերասան Վասօ Աբաշիձէի բեմական գործունէութեան 40-ամեակը։ Ծօրելեանի նախաձեռնութիւնը ստանձնել էր վրաց Դրամատիկ Ընկ., որ հանդէսը բաժանել էր երկու մասի։ Ցերեկով ներկայացում, որի երկրորդ արարածից յետոյ յօբելեանական հանդիսի կատարումը, իսկ երեկոյեան ներկայացում։ Սիրալիր համերաշխութեան և եղբայրակցութեան իրրև առհաւատչեայ, Ծօրելեարը ցերեկուայ ներկայացման ընտրել էր Սունդուկեանի Պէպօն, իսկ երեկոյեան Նիրվանդադէի Պատուի համար, պիէսները, երկուսումն էլ իր՝ Ծօրելեարի մասնակցութեամբ։ Տօնական էր և Ծօրելեարի լծակից դերասանների որամադրութիւնը, որոնք շատ բայլուն կատարեցին իրենց դերերը։ Վրաց ակումբի թատրոնական փեմը համեմատաբար ընդարձակ է, իսկ հանդիսականների համար յարմարեցրած դահլիճը փոքր։ Վրաց հրդեհած թատրոնը չը վերաշնորոգուեց, որովհետև ձեռնարկած էր բոլորովին նորը կառուցանելու և այս նպատակաւ բացած էր հանգանակութիւն, պէտք մի րուբլիական կաժառոտուրք իւրաքանչիւրից։ Ժամանակին մենք ողջունեցինք այդ որոշումը և իրրև նշան համակրութեան ու համերաշխութեան, մենք աճապարանօք այդ գանձանակի մէջ դրինք և մեր մի րուբլին։ Ուրախ ենք, որ վրաց ազգային թատրոնը այժմ ոչ թէ հանգանակութեամբ, այլ ազատ Վրաստանի պետական գանձարանի միջոցներով կը կառուցանի։

Ծօրելեար Վասօ Աբաշիձէին բեմի վրայ ողջունեցին Վրաց Ազգային Խորհուրդը, Հայ և Վրաց Դրամատիկ Ընկերութիւնները, Ռուս Դերասանական Մութիւնը, Գրական-Գեղագիտական Սալօնը, Աղբիւրի, Մշակի, Տարազի խմբագրութիւնները, „Մուսաւաթ" Ընկ., վրաց վաճառականութիւնը ևն. ևն.։ Բոլոր դերասանները ողջունում էին բազմերախտ ծերունազարդ Ծօրելեարին, շեշտելով նրա բեղուն գործունէութիւնը յօգուտ հայրենի բեմի։ Հայոց Դրամատիկ Ընկ. խորհրդի անդամներ պ. պ. Ծովհ. Տէր-Գրիգորեան և Վրթ. Փափազեան իրենց ողջոյնների մէջ շեշտեցին նամանաւանդ այն անխզելի եղբայրական կապն ու համերաշխութիւնը, որ համարեա կէս դար չաղկապած են երկու բեմեր՝ վրացական և հայկական։ Գ. Ց. Տէր-Գրիգորեան, իբրև և Մշակի ներկայացուցիչ իր ճառը

Վ. ԱԲԱՇԻՃԷ

վերջացրուց վրացերէն լեզուով, ասելով վրաց առածը «Ջուրը կը գայ ու կը գնայ, իսկ աւազը իր տեղը կը մնայ». աւելացնելով, որ շատ ջրեր կերթան ու կը գնան, շատ ծովեր կը շփոթուեն և կ'ալեկոծուեն, բայց հայերն ու վրացիները միշտ էլ կը մնան մխիթարական բարեացակամ դրացիներ։ Ռուս Դրամատիկ. Մխիթեան ներկայացուցիչը իր ջերմ ողջոյնի մէջ, սակայն իր ցաւը յայտնեց, որ վրաց դերասանները բացակայում են պրօֆեսիօնալ այդ Մխիթեան մէջ։ Աղբիւրի, Տարազի և Գրական Գեղագիտական Սալօնի կողմից Ծօրելեարին ողջունեցին պ.-Տ. Նազարեան և սկանակ արտիստուհի-բանաստեղծուհի օր. Ս. Զիթենի, որ և կարդաց մեր հետևեալ ուղերձը՝

Ծարդանք, արհեստուհին տաղանդաւոր արուեստագէտ Վասօ Աբաշիձէին, բեմական իր բազմարդիւն քառասուն ամեակին։

Զրահաւորուած փայտէ սուր ու սուսերով, պճնազարդուած թղթէ ականակուռ թագ ու սաղաւարդով, ոսկեմաքուքդ՝ կսկիծ ու մըրմունջ, խանդ ու խարդաւանք, ժպիտ ու քրքիջ, քառասուն ձիզ տարիներ մարտնչեցիր բոնութեան ձիրաններում չքնաղ հայրենիքդ ազատութեան, նենդի, ոճերի դէմ։ Եւ այսօր յաղթական այս պանծալի օրդ Մեծարելի Ծօրելեար, դու տօնում ես, սակայն Աստուածային օրհնութիւնն ու շնորհը, մի պարզգ, որ նախախնամութիւնը Քեզ էր որոշել վայելելու։ Այդ նիւթական պարգևը՝ Քո աշքերով, կեանքիդ ձմրան շէմբում չքնաղ Հայրենիքիդ՝ Վրաստանի անկախ ու ազատ տեսնելդ է։

Ընդունիր, Ծողնավաստակ Ծօրելեար, Աղթիւրի, Տարազի, եւ Գրական-Գեղագիտական Սալօնի ջերմ ողջոյններն ու շնորհաւորութիւնները։ Եւ թող գարնանաբաց Վրաստանի այս սրշալոյսին Քո բազմարդիւն կեանքն այնքան երկարի, որ տեսնես Հայրենիքիդ գեղածիծաղ առաւօտը և կենսարար շատ-շատ օրերը։

Կեցցէ հրաշագեղ Վրաստանը։

Կեցցէ Վրաստանի արժանաւորազոյն զաւակ Վասօ Աբաշիձէն։

Ուղերձը, գրուած պատշած գեղանկար կարտօնի վրայ, մատուցեց ծերունազարդ Ծօրելեարին, ինչպէս և վենետիկեան ձեռագործ մի շքեղ սափոր ծաղկեփունջ մէջը։ Հ. Դրամ. Ընկ. և Ռուս Դերաս. Մխիթիւնները մատուցին գեղեցիկ պսակներ, պճնազարդուած ժապաւէններով։ Սակայն և այլ հասարակութիւններից շատ թանգարժէք ընծաներ և մի շարան ղրամական փաթէթներ։ Հասարակութիւնը և բեմի վրայ բազմաթիւ սրբեսարապետները ջերմագին ծափահարութիւններով և ցնծութեամբ աւելի ևս աւելին էին հանդէսին փայլ և ուրախութիւն, որին ներշնչակ նուագում էր վրաց ակումբի նուագախումբը։

Vigo

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ARMENIAN LEGENDS AND POEMS

illustrated and compiled by Zabel C. Boyadjian

212 մեծադիր փառահեղ երեսներ, տպւած Լօնդոնում՝

Հայութեան տեղատուած և ցաւագին, բազմատոնջ իրականութիւնը, նրա սևատարած մթնոլորտը, միշտ ունեցել են երևոյթներ՝ թանձր խաւերը լուսազարդող և սուգն ու թախիծը մխիթարող։

Ցատկանիշ հայի կենսունակութեան իրական փաստ է, որ՝ հալածական օտարութեան ապուհինած հայը, պետնելով յարմար տեղ և հող՝ խաղաղ և կուլտուրական միջավայրում անմիջապես արմատանում է, ծլում, ծաղկում և տալիս պտուղներ գիտութեան, արուեստի, գրականութեան ևն տապաքէզներում։

Ըը յիշելով մի շարք եւրոպացում հայ անունը բարձր բռնող եւ րաժշտագէտներ, նկարիչներ, լեզուարաններ, քննադատներ, դիւանագէտներ, ֆինանսական, առևտրական ևն ևն գործիչներ, հայութիւնը կարող է պարծել նաև ի դէմս դրուատաւոր արժանի տիկնանց փափկասունց Հայոց աշխարհի, որ քընքշանք ու պշրանքն մոռացած, նըւիրուած են հասարակական-կուլտուրական գործունէութեան, դառնալով մի-մի մթնոլորտական երևոյթներ, պայծառ գիսաւորներ հայ ամպամած հորիզոնի վրայ. սրանք են Armena *(Անանուն արիման-խան Մամիկոնեան-Ընիկոլոպ), Վիկտորիա-Ադանուր-Ռոմպելիի, օր. Զաբել Դ. Բոյաճեան են՝ հրապարակախօս, բանաստեղծ, նկարիչ։*

Օր. Զաբել Դ. Բոյաճեանի ընքնաղնորագոյն հրատարակութիւնը Armenian legends and poems *(Հայկական վէպեր եւ դիւցազնեներգութիւններ), որ, չը նայած ժամանակիս պօստային հաղորդակցութեան դժւարութիւններին, օրերս Լօնդոնից ստացաւ թերթիս խմբագիրը պ. Տ. Նաղարեան նւէր իր հեռաւոր բանիմաստուհուց, (հեղինակ արուեստագէտուհուց), մի շատ գեղեցիկ մեծատպիչք աշխատութիւն է, զարդարուած լուսատիպերով, հեղինակի քանկ նկարած, ուշագրաւ և հրապուրանք գունաւոր պատկերներով։ Հրատարակութիւնը մեծ հատոր, քառածալ 212 եր. փառակազմ։*

Մատեանը նւիրուած է Հայաստանի անմահ ոգոյն։ Հեղինակ օր. Զաբել, հակիրճ յառաջաբանում ասում է, որ իր միակ նպատակն էր հրատարակել Ս՛ի դժբաղդ ազգի յուշարձանը առանց յաւակնութիւն ունենալու ամփոփել բոլոր ազգային լաւագոյն ժողովրդական երգ ու վէպերը։ Նրա ցանկութիւնն է եղել իր այս հրատարակութեան մէջ ամփոփել մի քանի չքնաղ շարականներ ևս, ինչպէս և Ներսէս Շնորհալու ողբերն, բայց, օտար լեզւի մէջ սրանց բնորոշ գեղեցկութիւնը ճշգրտապէս փոխանցելու անկարելութիւնը նկատի առնելով, ձեռնպահ է մնացել։

Գալով իր ճկուն մատներու նրբագիծ, գեղեցիկ 12 նկարներին, ասում է, յղացման և իրականացման ժամանակ չանսացել է ըստ աւենայնի հետևել մեր հին գեղադիրներու միջի մանրանկարներու արուեստին և այժին, պահելով ազգային նկարչութեան բնոյթը։

Այսպիսի ժանրագնին ուսումնասիրութեան արդիւնքը հետևեալ 12 գունաւոր ժանրանկար պատկերացումներն են։

1.) Հայաստան (կամ Մայր Հայաստան)։

2.) Ծնունդ Վահագնի հայոց թագաւորին։

3) Արա (գեղեցիկ) ու Շամիրամ։

4.) Վան հաղաքի հիմնարկութիւնը։

5.) Արտաշես ու Սաթենիկ։

6.) Հարսանիք Արտաշեսի ընդ Սաթենկանն։

7.) Արտաւազդ։

8.) Դիր Քրիստոսի առ Աբգար։

9.) Վանայ լիճը։

10.) Տեսիլ Ռոզիֆլի՛ իշխանաճոյն հայոց։

(Ճոհն Գովերի գրութեան մի պատ.)

11) Տիկինն ու գուսանը (Րաֆֆիի գրուածքներից մի պատկերացում)։

12) Անյուս բերդը։

Սքանչելի, մէկը միւսից աւելի գեղեցիկ են, գիւտաւոր յղացումներ և գաղափարի յաջող արդիւնացումներ։ Փայլուն ու փարթամ այս հրատարակութիւնը պճնազարդուած է նշանաւոր քաղաքագէտ և հայասէր Ջէմս Բրայսի հետևեալ նեղածութիւնով, իբրև ապացոյց այն գաղափարին և գնահատանքի, որ հայութեան մասին տիրում է եւրոպայի գիտնական աշխարհում։

Հայ լեզուն այն միակ ամենահին լեզուն է, որ ճոխ մատենագրութիւն ունի։ Հայն արդէն չորրորդ դարուց սկսած Քրիստոսի հաւատի հետ քաղաքակրթութիւնը խառնելով այս չափ դարերի ընթացքում պաշտպանելով, իսկապես եղած է միակ ազգը առաջաւոր Ասիայում, որ ունի իւր մէջ կարողութիւն և շնորհք կրկին ծաղկեցնելու իւր շէն և բազդաւոր երկիրը դարձնելու իր։ այժմ չարաչար ամայացած, բնաշխարհը, հայաստանը, որ է նախկի սիրան մարդկութեան և քաղաքակրթութեան։

Եւ այս ազւի գրականութեան, բանաստեղծութեան և նկարչութեան հետ մեզ ծանօթացնողներու մինը ևս, յաջողապէս եղաւ օր. Զաբել Բոյաճեանը, որ դուստրըն է իմ բազմամեայ բարեկ մ հայ հոգևորականին, որ միաժամանակ Անգլիայի փոխ հիւպատոսն էր և Դիարբաքիր քաղաքի մէջ Տիսոհի սիրան։ Ջ. Բ.

Հ Դ. Վ. Կ.

Տարիներից ի վեր Թիֆլիսում հրատարակւող պետականներէն Kaukasiche Post *շաբաթաթերթը, որ պատերազմի պատճառով դադարել էր, նորից վերսկսելով, հետևեալ ողջոյնով է դրւատում վերածնւած անկախ Վրաստանին՝։*

«Դու ապրում էիր, թեև դու մեռելային քնի մէջ էիր շատ երկար, ա՛խ, շատ երկար, մօտ հարիւր տարի։ Դու ապրում էիր ապրում ես եւ կը շարունակես ապրել այսուհետեւ կողմ-կողմի տւած Քո ստոկս ամուսնու հետ ուրախութիւն Քո բարեկամների եւ ցաւ Քո թշնամիներին։ Փառաւոր, Դուք ազնիւ օրիորդ, Քո հարսանեաց օրը եւ քող պայծառ յոյսը Քեզ ողջունի սեւ գիշերից յետոյ ալածութեան դրօշակի տակ։ Փառ Քեզ հարսնական զարդարանիդ մէջ, փառ Քեզ, Դու յուսապայծառ, փառ Քեզ եւ Քո ապագային, քող նա Քեզ այն աւելը բերի, ինչ Քո սիրտը բաղձում է։ Ապրիր, ծաղկիր եւ զարմացիր երջանկացիր ընդմիշտ։ Դու ազնիւ օրիորդ-սուգայապուստը, բոլոր տուր մեզ ցնծալ Քեզ հետ, որովհետեւ այսօր Քո տօնի է։ Եւ երբ դառն օրերդ վերջնական վախճան լրցնեն, ապա գիտցիր, որ մի երջանիկ ասող իշխում է Քեզ եւ Քո հաւատը դեպի այդ ասողը Քեզ կը փրկի ամեն վտանգից։ Խաւարից դեպի յոյս։ Կեցցէ Վրաստանը»։

Այո՛, կեցցէ և բարգաւաճէ չքնաղ Վրաստանը և քող պիտութեան ու արուեստի շտեմարան, սիրելի Գերմանիան աւելի և աւելի սերտ շաղկապով իր անյաղթ գիտութիւնը, ճշտապահութիւնը, տեխնիկայի արդիւնաբերութիւնը բերի ոչ միայն Վրաստանին, այլ և յօշոտած, ոգւոր Հայաստանին, որ կատարեալ թիւրիմացութեամբ, շընորհիւ արտաքին ինտրիգների, երկու կողմից էլ, կրկնում ենք, թիւրիմացութեամբ, չեն ճանաչւել բարեկամները։

ԱՍՈՒՄ ԵՆ

Ասում են քահանըրորդ դարը երկրի համար բարիք ծնեց,
Ճանկաթ դժոխքը դրախտ դարձաւ, սուտ է, չեմ հաւատում։
Ընդհանուր ազգերի մէջը սէր միաբանութիւն հիմնեց,
Կողոպտելն, սպանելն անցաւ. սուտ է, չեմ հաւատում։

Ասում են, կեանքը լաւացել է, հին ժամանակները գնացին,
Երկրի թշնամիք մեռան, պաշտպանողները մնացին.
Տանջուած ժողովրդի համար ապրուստի լայն դուռը բացին,
Էլ չենք մնայ քաղցած, ծարաւ. սուտ է, սուտ է, չեմ հաւատում։

Ասում են, հպարտ բողոքին երբեք վերջ չի լինելու,
Գեթաք է միշտ տանջուի, չարչարուի, պարտք ունենայ ողբալու,
Ներկան տեսնի ու անիծի, գալիք օրերին է փառք տալու.
Այ, դա իմ խելքումս մտաւ, ճիշտ է, ճիշտ է, հաւատում եմ։

Ասուղ Հազրի

Գերմանիայի թագաւորազգ
ՊՐԻՆՑ ՎԻԼՀԵԼՄ

Պենեւալիսումաւս
Էնվէր-փաշա

ՐԱՖՖՈՒ ՄԱՀՒԱՆ ԵՐԵՍՆԱՄԵԱԿԸ

Այս տարւոյ ապրիլի 25-ին (մայիսի 6-ին) լրացաւ Րաֆֆիի մահուան երեսնամեակը և Գրական-Գեղագիտական Սալօնը իր ամառային քնակարանում, «Ակւարիում» այգում, մայիսի 13-ին, բացօդեայ իր էլէքտրիկ թատրոնում կատարեց հանդիսաւոր պաշտամունք բժշկապետ պ. Բ. Նաւասարդեանի նախագահութեամբ։ Հ. Բենիկ վարդապետը և հ. Տէր Նիկողայոս Բաւեանան կատարեցին համառօտ հոգեհանդիսա երգեցին հ. Տէր-Նիկողոյոսնը շնաւոր տեղօրը պատշաճ շարականը, իսկ մեր ուժգին բարիտոն պ. Բ. Ամիրջանը Րաֆֆու Զայն տուր ով ծովակ-ը, նւագակցութեամբ դաշնակահարուհի Աբուսեակ Բաբալեանի։ Նախագահ բժշկապետ պ. Նաւասարդեանը դրւատեց Րաֆֆուն իբրև հայրենասէրի և մեծ գրողի։ Հ. Բենիկ վարդապետը տւաւ Րաֆֆիի հակիրճ կենսագր.-քարակտերիստիկը, վիպասան պ. Վրթանէս Փափազեան պատմեց յիշողութիւններ և ցնծեց, որ Րաֆֆին իբրև մեծ գրող, ունի մեծ նշանակութիւն հայ ազգի համար։

Ապա հանդիսականներին սիրնեմօտոգրաֆիական ներկայացումով հիւրասիրեցին։ Ծոյց տւեցին ս. Էջմիածինը և նրա շրջակայքը իր կեանքով։ Հանդէսը պատւել էին վրացի և ռուս հասարակական, գրական գործիչներ, բայց բացակայ էին մեր ազգային խորհրդի, դպրոցների, գրականազէտների, կուլտուրական ընկ. ներկայացուցիչներից շատերը, որոնք պարտաւոր էին ներկայ գտնուելու։ Սակայն դասալիքութիւնը ոչ միայն ճակատի վրայ է, այլև թիկունքում, էլ ինչու մեղադրենք ուրիշներին։ Աստուած տւերը տեսնում է, ծիւնը դնում, ասում է ժողովուրդը ..

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ

Ամբողջ վրացական հասարակապետութեան մէջ (Թիֆլիսի, Քութայիսի նահանգները և Սուխումի շրջանը) օրացոյցի տեղեկութիւնների համաձայն հաշււում են 2,716 հազար բնակիչներ, որոնցից վրացիք 1,685 հազ. (62,0 տոկոս), հայեր 437 հազ. (12,4 տոկոս), ռուսներ 193 հազ. (7,9 տոկոս)՝ թաթարներ 109 հազ. (4,8 տոկոս)՝ աբխազներ 103 հազար (4,6 տոկոս), օսեր 58 հազար (2,1 տոկոս) և մնացածները 0,2 տոկոս։

ՅԻՍՆԱՄԵԱԿ
ՍԵՆԵԲԵՐԻՄ ԱՐՄՐՈՒՆԻ

Ներկայ տարւոյ մայիսի 29-ին լրացաւ մեր ռահվիրայ Սենեքերիմ Մարգարեան Արծրունու իրաւաբանական փայլուն գործունէութեան յիսնամեակը։

Յօբելեանական հանդիսաւոր ակտը կատարեց Իրաւաբանների Ընկերութիւնը, յունիսի 23-ին, կովկ. դատար. պալատում։ Մերոնք նպարդ յօբելեարին մնք պղնձեցինք հետեւեալ ուղերձով

Հինգ տասնեակ տարիներ արդարադատութեան այս վեհ տաճարում դուք պաշտպանել էք մարդկանց արդար իրաւունքն ու ճշմարտութիւնը և զուգնթաց սրան գործել յօգուտ լուսաւորութեան և կուլտուրայի տարածման հայրենակիցներիդ մէջ՝ դպրոցական, գրական, թատրոնական և այլ ասպարէզներում։ Ձարազը մօտ երեք տասնեակ տարիներ պճնիզարդել է Ձեր սիրուն և խնդասալից յօդւածներով, Գրական-Գեղագիտական Սալօնի հերթական հաւաքոյթներին 12 տարի յաճախ նախագահել և վանահպել էք Ձեր պերճ ու փայլուն ճառերով, հմայելով նոյնիսկ օտարերկրեայ մեր ականաւոր հիւր գրականագէտներին ու արւեստագէտներին։

Այսօր, բազմերախտ Յօբելեար, հանգամանքները քեզ



ԱԲԱՍԹՈՒՄԱՆ

Տաճկա-Վրացական ճորտահավաքը.

Հայրենակիցներիդ հաստատութիւններից ոմանք եթէ բացակայ են և զուրկ հնարաւորութիւնից անձամբ Ձեզ սպասելու, մատուցանելու երախտագիտական զգացմունք, հաւատացէք, ծերունազարդ Յօրելեարը, նրանց ամենքն է Ձեզ արևշատութիւն, առողջութիւն և Ձեր վայելուն աչքերով տեսնելը արդարադատութեան յաղթանակը յօշոտածդ Հայրենիքիդ և նրա կարմիր արշալոյսին պայծառ ճակատդ ոսկեհիներով պսակելը։

Ցարգանք Ձեզ, մեծարդ Յոբելեար։ Աղբիւրից, Տարագից, Զրբանից հեղափոխական Սայօնից։

Տարազի ներկայ №-ի հետ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին նաեւ մեր Հրատապ տպարանդպրոցի հրատապ հրատարակութիւն Նոր-Տարի 1918 Օրացոյց ժողովածոները։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հզօր, առայժմ աւելացնենք երբեմն, Ռուսիայից պոկուած Անդրկովկասեան հանրապետութիւնները, հրաւիրուից նախ Տրապիզոն, ապա Բաթում, իսկ այժմ էլ Կ. Պոլիս կօնֆերանսների։ Երեք բողբոջ պետութիւնները էլ ուղարկեցին իրենց լիազօր պատւիրակները երեք կօնֆերանսին էլ։ Առայժմ Վրաստանը պաշնակցել է Գերմանիային, որը պարտաւորուել է ղէնքի ոյժով պաշտպանել Վրաստանի անկախութիւնը, սահմանները և երկրի խաղաղութիւնն ու անդորրութիւնը, թէ ինչ պայմաններով և տիրուապետութ ինչի, առաջմս յայտնի չէ։ Մի շշուկ, սակայն, որ դեռ անցեալ տարւայ վերջերը լսւում էր, թէ վրացիները Գերմանիայի հետ բանակցել և յանգել են որոշ համաձայնութեան, այժմս ճշտւում է։

Գերմանացիք արդէն վրաստանի հանրապետութեան մէջը են, ծածանւում է և Գերմանիայի վայլուն ու ցանկալի դրօշակ, որը վրացական զօրքի հետ ընդդէմ անդրկովկասեան թիւրքիայի և թէ տաճկական զօրքերի, պաշտպանում է վրացական սահմանները ու իրաւունքները։ Այս պատերազմի մէջ սպանւած ու վիրաւորւած գինուորներ ու սպաներ կան և գերմանացիներից։ Թիֆլիսում կազմակերպւած է գերմանական գինուրական շտաբ, որ բնակութիւն է հաստատել հայկական Ժողովարանի հակայ շինութեան մէջ, Մանթաշեանի տունը, որի հանդէպ աւելի ևս հակայ, Թիֆլիսի ամենաշքեղ, ությարկանի Արամեանցի նորակառոյց տունը բազմած է Հայոց Ազգային Խորհուրդը իր շտաբով և գեպարտամենտներով։

ՏՊԱՐԱՆ-ԴՊՐՈՑ «ՀՐԱՏԱՊ» ԹԻՖԼԻՍ. Тифлис. Головин. пр., 41